ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

2017թ.

Ց Ա Ն Կ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....3
2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ 5
3. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ.....9
4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....10
5. ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....11
6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....14
7. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ.....15
8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....17
9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....22
10. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....28
11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....36
12. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ.....38
13. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....40
14. ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....46
15. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....49
16. ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....53
17. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....55

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ / առ. 01.01.2017թ./

ՀՀ Արարատի մարզպետարանը 2016թ. իր գործունեությունն իրականացրել է առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, ինչպես նաև մարզպետի որոշումներով, կարգադրություններով և աշխատակազմի ղեկավարի հրամաններով:

Հաշվետու ժամանակահատվածում Արարատի մարզպետարանում մուտքագրվել է 10554 փաստաթուղթ, որից 9011-ը՝ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով:

Մուտքագրված փաստաթղթերից

3614-ը ստացվել է վերադաս մարմիններից, նախարարություններից և այլ գերատեսչություններից,

3981-ը՝ տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից, որից

2518 -ը՝ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի փաթեթներ,

2959 -ը՝ քաղաքացիներից ստացված դիմումներ, բողոքներ և առաջարկություններ:

Վերադաս մարմիններ և այլ կազմակերպություններ են հասցեագրվել 7986 փաստաթուղթ:

2016թ. ընթացքում, համաձայն սահմանված կարգի, կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բազմաբնույթ հարցերով հաշվառվել և ընդունելությանն են մասնակցել 873 քաղաքացի:

2016թ. ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 99 որոշում, 246 կարգադրություն:

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորվել են մարզպետարանի աշխատակազմի 27, վերապատրաստվել՝ 34 քաղաքացիական ծառայողներ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունած 14712 իրավական ակտ, որից 3332-ը՝ ավագանու որոշում, համայնքի ղեկավարի 9243 որոշում և 2137 կարգադրություն:

Վերանայման կամ վերացման առաջարկությամբ վերադարձվել է ՀՀ օրենսդրության հակասող 79 իրավական ակտ, այդ թվում ավագանու 56 որոշում, համայնքի ղեկավարի 17 որոշում և 4 կարգադրություն: Նշված բոլոր 79 իրավական ակտերն օրենքով սահմանված ժամկետում վերանայվել և համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը:

2016 թվականի ընթացքում սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել է մարզպետի և մարզպետարանի գործունեության լուսաբանում, պաշտոնատար անձանց հանդիպումներ զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նյութերը տեղադրվել են մարզպետարանի կայքում, տրամադրվել, տարածվել և լուսաբանվել են տեղական և հանրապետական ԶԼՄ_ներով՝ «Արարատ» մարզային հեռուստատեսության, «Արարատ» մարզային, «Արտաշատ» թերթերի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի, «Արմենպրես» գործակալության, «Հանրային հեռուստաընկերության» և այլ լրատվամիջոցներով:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզպետարանը սպասարկում է 261 կազմակերպությունների, այդ թվում 150 մարզային ենթակայության, 97 համայնքների և 14 համայնքային ենթակայության ամբուլատորիաների:

2016թ. պետական բյուջեից մարզպետարանի ենթակայության հիմնարկներին հատկացված ֆինանսական միջոցների ընդանուր գումարը կազմում է 8մլդ. 313.4 մլն. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 8մլդ. 44.4մլն. դրամ, կատարողականը կազմել է 96.8%:

Կազմվել է մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների 2015թ. բյուջեների ամփոփ տեղեկանքը՝ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման, ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, մեթոդական օգնություն է ցույց տրվել մարզի 97 համայնքների ղեկավարներին և աշխատակազմերի հաշվապահներին՝ համայնքների 2015 և 2016 թթ. բյուջեների նախագծերի կազմման ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

/առ 01.01.2017թ. դրությամբ/

/ հազ. դրամ/

		2016թ		
		պլան	Ֆինանսավորում	կատ%
	1	2	3	4
1	Ապարատի պահպանում	489724,1	483294,6	98.7
2	Արտասահմանյան գործուղումներ	383,3	383,3	100
3	Մարզային նշանակության ավտոճ. ձմեռ. պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	39300,0	39300,0	100

4	Թանգարանային ծառայություն	17755,6	17755,6	100.
5	Մշակութային միջոցառումների իրականացում	3195,4	1615,0	50.5
6	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	29341,0	29341,0	100.
7	Նախադպրոցական կրթություն	86437,8	86437,8	100
8	Հանրակրթություն	6626570,1	6626422,7	100
9	Ներառական կրթություն	114826,3	114527,6	99.7
10	Անապահով երեխաների դասագրքերի ձեռք բերում	86,7	0,0	0.0
11	Այլընտարանքային ծառայության ապահովում	4680,0	4680,0	100
12	Պահուստային ֆոնդ	381580,8	340053,28	89.1
13	Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	23713,5	18944,34	79.9
	Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին	169074,2	169074,2	100
14	Մշակութային օբյեկ. հիմնանորոգում	74024,0	28401,7	99.9
15	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	248015,8	80081,41	32.3
16	Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	4746,1	4103,0	86.45
17	Ապարատի պահպանում	489724,1	483294,6	98.7
18	**Ընդամենը**	8313454.7	8044415.53	**96.8**
19	Դոտացիա համայնքներին	4.438.150.	4.438.150.	100
	ԸՆԴԱՄԵՆԸ	12751604.7	12482565.5	97.9

ՀՀ պետական բյուջեից մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության հիմնարկների ֆինանսավորման, համայնքներում մուտքերի ընթացքի, ինչպես նաև առողջապահական ՓԲԸ-ների ֆինանսավորման վերաբերյալ:

ՀՀ 2016թ. պետական բյուջեն հաստատվելուց հետո՝ կազմվել է մարզի 107 հանրակրթական դպրոցների, 2 թանգարանների համար բյուջեից կատարվող հատկացումների ամփոփ նախահաշիվները, բյուջեով նախատեսված ծախսերի բաշխումը՝ եռամսյակային կտրվածքով:

Համայնքներից ընդունվել, ամփոփվել, քննարկվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել մարզի համայնքների 2015թ. տարեկան բյուջեների կատարման ամփոփ տեղեկանքը՝ ըստ առանձին եկամտատեսակների:

Սահմանված կարգով՝ եռամսյակային կտրվածքով, ՀՀ տարածքային կառավարման և և զարգացման նախարարություն է ներկայացվել հաշվետվություններ մարզպետարանի և մարզային ենթակայության հիմնարկների ֆինանսավորման, վարձավճարների գանձման, համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ:

Ամփոփվել է մարզի համայնքների ամսական, եռամսյակային, կիսամյակային և ինը ամսվա բյուջեների կատարողականը:

Ընդունվել, ամփոփվել և ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացվել մարզի կրթության համակարգի հիմնարկների 2016-2017թթ. ուստարվա տարիֆիկացիաները:

Համայնքների 2016թ. բյուջեով եկամտային մասը / առանց օտարումից մուտքերի և տարվա սկզբի մնացորդի/ նախատեսվել էր.

6 մլրդ 553.7մլն դրամի չափով, որի դիմաց փաստացի մուտքը կազմել է 6 մլրդ 553.2 մլն դրամ, կամ 100.0%, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է մուտքագրվել 185.4մլն. դրամով, ինչը պայմանավորված է ինչպես ապառքների, այնպես էլ հաշվարկային ցուցանիշների ավել պլանավորմամբ:

Սեփական եկամուտների գծով նախատեսված 1 մլրդ 835.0մլն դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 1 մլրդ 830.2մլն դրամ, սեփական եկամուտների պլանը կատարվել է 99.7% -ով;

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ-ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

	2015թ			2016թ		
	պլան տարեկան	փաստացի	կատ.%	պլան տարեկան	փաստացի	կատ.%
1	2	4	5	6	8	9
Հողի հարկ	612,045.0	596,694.0	97.5	610.266	589.900	96.7
Գույքահարկ	639,239.0	688.307	107.7	707.272.0	776.451.0	109.8
Տեղական տուրք	73,631.0	74.245	100.8	70.748.5	72.885.0	103.0
Պետական տուրք	42,500.0	40.228.0	94.7	41.800.0	37959.0	90.8
վարձակալություն	187,483.0	135.216	72.1	194.149.0	140.244.0	72.2
Այլ մուտքեր	213,737.0	209.035	97.8	210.851.0	212.792.0	100.9
Դոտացիա	4,207,067.3	4,207,067.3	100	4.438.149.6	4.438.150.0	100.0
Պատվ. լիազորություն	33,026.0	33,026.0	100	33.777.0	32.469.8	96.1
Սուբվենցիա երաժշտ. դպրոց	29,341.0	29,341.0	100	29.341.0	29.341.0	100.0
դրամաշնորհ ընդացիկ	257,265.5	257,265.5	100	209.396.3	215.150.0	102.7
Դրամաշնորհ կապիտալ	97,333.7	97,333.7	100.0	8.000.0	7.870.0	98.3
Ընդամենը եկամուտներ	6,392,668.5	6,367,758.8	99.6	6553.750.4	6.553.211.8	100.0
Սեփական եկամուտներ	1,768,635.0	1,743,725.0	98.6	1835086.5	1.830.231	99.7

Համայնքներն աշխատավարձի գծով պարտքեր չունեն:

3.ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Մարզպետարանի ներքին աուդիտի ենթակա շրջանակը կազմված է 181 միավորներից, որից՝ 7-ը՝ վարչություններ, 17-ը՝ բաժիններ, 3-ը՝ առանձնացված ստորաբաժանումներ, 107-ը՝ դպրոցներ և 41-ը՝ բժշկական հաստատություններ:

Համաձայն ՀՀ Արարատի մարզպետի 2016 թվականի հունվարի 27-ի թիվ 09 որոշման, 2016 թվականին ռիսկերի գնահատման արդյունքում ընտրանքային կարգով ներքին աուդիտ է պլանավորվել և իրականացվել 35 դպրոցներում, 5 բժշկական հաստատություններում, 2 բաժիններում:

Միավորների կառավարչական, կազմակերպչական, գործավարական և ֆինանսական գործառույթներում հայտնաբերվել են թերություններ և որոշ օրենսդրական ակտերի խախտումներ:

Որոշ միավորներում հայտնաբերվել է նաև անաշխատունակության նպաստների վճարների սխալ հաշվարկներ, ինչի հետևանքով ավել վճարված գումարների՝ դեպի բյուջե հետգանձման վերջնաժամկետներ են սահմանվել:

2016 թվականի ընթացքում իրականացված ներքին աուդիտի արդյունքում կատարված հայտնաբերումների արդյունքում դեպի բյուջե հետ գանձում է կատարվել 506 հազար ՀՀ դրամ:

Կազմակերպությունների տնօրեններին առաջարկվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված բացթողումներն ու թերությունները աուդիտորական հաշվետվություններով սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ, և արդյունքների մասին գրավոր տեղեկատվություն ներկայացնել ներքին աուդիտի բաժին:

4.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում զգալի աշխատանք է կատարվել քաղաքաշինության բնագավառում կառավարության տարածքային քաղաքաշինության իրականացման, համայնքների գլխավոր հատակագծերի, գոտիավորման սխեմաների մշակման, առաջնահերթ լուծում պահանջող օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, համայնքների կողմից քաղաքաշինության նպատակով հողհատկացման առաջարկությունների, դպրոցների վերանորոգման նախագծային առաջադրանքների կազմման և վերանորոգման աշխատանքների կազմակերպման, համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեության վերահսկման, ինքնակամ շինությունների հայտնաբերման և կասեցման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության 2016 թ. պետական բյուջեով հաստատված՝ ՀՀ Արարատի մարզպետարանին բյուջետային ծախսերով նախատեսված է 1 մշակութային և 6 կրթական օբյեկտների 7 ծրագիր, որի ընդհանուր գումարը կազմում է 340 մլն. դրամ:

ՀՀ կառավարության 30.06.2016 թ. N664-Ն և 11.08.2016 թ. N 823-ն որոշումներով մարզում առկա հրատապ խնդիրների լուծման նպատակով Արարատի մարզին 2016 թ-ին հատկացվել է 6 և 316 մլն. դրամ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով իրականացվել է դպրոցական և նախադպրոցական շենքերի հիմնանորոգման:

Հիմնանորոգման աշխատանքներում հիմնականում ընգրկվել են դռների, պատուհանների փոխարինման, ընդհանուր հարդարման, արտաքին բարեկարգման, ցանկապատի կառուցման, կոյուղու ցանցի վերանորոգման աշխատանքները:

2016թ-ի հրատապ ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների ծավալը հիմնականում ընգրկել է բազմաբնակարան շենքերի տանիքների, դպրոցների, մանկապարտեզների, մշակույթի, առողջական օբյեկտների հիմնանորոգման, գազատարերի կառուցման, բակերի, ճանապարհների բարեկարգման և ասֆալտապատման

աշխատանքները: Այսպիսով՝ թվով 18 օբյեկտների շինմոնտաժային աշխատանքներն ընգրկում են 18 համայնքներ:

Արաքսավան համայնքում 3 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ են վերանորոգվել:

Նոր Կյանք, Փ. Վեդի, Մրգավետ և Լուսառատ համայնքներում կառուցվել է ներքին գազատարի ցանց: Մարզի մի շարք համայնքներում տարբեր բնույթի շինաշխատանքներ են իրականացվել դպրոցական, նախադպրոցական շենքերի վրա:

Ջեռուցման լոկալ համակարգ է կառուցվել Ջրահովիտ համայնքի մանկապարտեզի համար, իրականացվել է պարիսպի կառուցման և տանիքի վերանորոգման, ինչպես նաև գազաֆիկացվել է շենքը:

Միջոցների ներդրման հաջորդ ոլորտը բակերի և փողոցների ասֆալտապատման, բարեկարգման աշխատանքներն են, մարզի Նոյակերտ համայնքում իրականացվել է ասֆալտապատման, իսկ Աբովյան համայնքում՝ մշակույթի տան բակի բարեկարգման աշխատանքներ:

5.ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզում կա 57893 բնակարան, որից 795-ը՝ պետական, 57098-ը՝ մասնավոր:

Բնակարանային ֆոնդը կազմում է 5 մլն. 649.7 հազ. քմ, որից 5 մլն 617.2 հազ. քմ՝ մասնավոր, 38.1 հազ քմ՝ հանրային:

2016 թ. ընթացքում մարզի 4 քաղաքների տեղական իշխանությունների կողմից որոշակի աշխատանք է տարվել բնակավայրերի թվով 439 բազմաբնակարան շենքերի մի մասի տանիքների և մուտքերի վերանորոգման, զբոսայգիների և հրապարակների բարեկարգման, փողոցային լուսավորության վերականգնման ուղղությամբ:

Վերջին տարիներին համայնքները լուրջ ուշադրություն են դարձնում բնակավայրերի գիշերային լուսավորության բարելավմանն ու վերականգնմանը: Ընդհանուր առմամբ, 2007-2016 թթ այդ նպատակով ծախսվել է շուրջ 200.3 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանը վերահսկել է կոմունալ ծառայությունների և համայնքների ղեկավարների կողմից իրականացվող աղբահանության, փողոցների բարեկարգման, կանաչապատման աշխատանքները:

Մարզում գործում է 2 համատիրություն՝ Արտաշատ և Արարատ քաղաքներում:

Ջրամատակարարում

Մարզի խմելու մայրուղի ջրագծերի երկարությունը շուրջ 870 կմ է, որից 660 կմ-ը՝ համայնքների տարածքում, իսկ ներքին ցանցերի երկարությունը մոտ 4033 կմ է:

Մարզում առկա են խմելու ջրի 25 ջրամբարներ՝ 32 հազ. խմ տարողությամբ: Մարզ մտնող ընդհանուր ջրաքանակը կազմում է շուրջ 1260 լ/վրկ:

«Համջրմուղկոյուղի» ՓԲԸ «Կենտրոն-Արևմտյան» տարածքային մասնաճյուղը ապահովում է խմելու ջրով մարզի 74 համայնքների 59980 բաժանորդների, այդ թվում՝ 150239 բնակիչների ու 1210 իրավաբանական անձանց:

Ջրի կորուստը կազմում է ահռելի թիվ՝ մոտ 54 %: Այս առումով կարևոր է ջրաչափերի տեղադրման խնդիրը՝ բաժանորդների միայն 80 %-ն է օգտվում ջրաչափից:

2015-2016թթ. ընթացքում «ՀՋԿ» ՓԲԸ-ի միջոցներով վերակառուցվել են մարզի մի շարք բնակավայրերի ջրագծեր՝ 54 մլն դրամ արժողությամբ:

Գազամատակարարում

2016 թ-ին մարզում գազաֆիկացվել է Արբաթ համայնքը՝ շուրջ 240.0 մլն դրամի սահմանում, կատարվել են գազաբաշխման համակարգերի, գործող վթարային գազատարների հետազոտման, վերատեղադրման և հիմնանորոգման աշխատանքներ: 2007-2016 թթ ընթացքում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ընկերության ներդրումը մարզում կազմել է մոտ 1.8 մլրդ դրամ:

Նշված վերջին 9 տարիների ընթացքում համայնքային բյուջեներից զգալի գումարներ են տրամադրվել գազաֆիկացման նպատակներին՝ շուրջ 972.5 մլն դրամ,

այդ թվում 2016 թ-ին պետական ծրագրով իրականացվել և բարելավվել է Փ. Վեդի, Լուսառատ, Մրգավետ, Նոր Կյանք համայնքների ներքին գազատարների ցանցը:

Մարզի գազաֆիկացված բնակավայրերի թիվը կազմում է 84 /2003թ.-52/, գազից օգտվող ընտանիքների թիվը՝ 45832-ից հասել է 46032 /2003թ.- 18789/:

Հեռահաղորդակցություն

2016թ-ի ընթացքում որոշակի աշխատանքներ են տարվել հեռահաղորդակցության ոլորտում: Այսպես, թվայնացվել են Արարատ, Մասիս և Վեդի քաղաքների հեռախոսակայանները:

Տարվա ընթացքում կտրուկ ավելացել է համացանցից օգտվողների թիվը՝ մարզում այսօր ունենք 67 հազար ինտերնետ բաժանորդ՝ նախորդ 60 հազարի դիմաց:

Էլեկտրամատակարարում

Արարատի մարզի բնակչությանը որակով և անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման նպատակով «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 2016 թ. իրականացվել է բարձրավոլտ ցանցերի ինչպես պլանային-պրոֆիլակտիկ, այնպես էլ մի շարք հիմնանորոգման աշխատանքներ: Կատարված աշխատանքների վրա ծախսվել է շուրջ 213 մլն դրամ գումար:

Ձմռանն անխափան էլեկտրաէներգիայի մատակարարումն ապահովելու նպատակով՝ կատարվել են 2016-2017 թթ. աշնան-ձմռան նախապատրաստական աշխատանքների ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, 2016 թվականին մարզում իրականացված ներդրումների մոտ 70%-ն ունի ընդգծված սոցիալական ուղղվածություն՝ այն ընկած է եղել մարզպետի կողմից ձևավորված քաղաքականության հիմքում, որի արդյունքում Արարատի մարզը 2016 թվականն ամփոփեց սոցիալ-տնտեսական ցուցանիշների էական առաջընթացով, ինչպես նաև մարզում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտով:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2016 թվականին ՀՀ Արարատի մարզում գտնվող միջպետական, հանրապետական, մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներին ընդհանուր առմամբ կատարվել է 2 մլրդ 675.7 մլն դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ, որից՝

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 187.7 մլն դրամ ընդհանուր գումարով վերաանորոգվել են՝

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջոցով - 4 ճանապարհահատվածներ՝ 178.3 մլն դրամ.

- Ջրաշեն համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգում
- Արմաշ համայնքի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում
- Վ. Արտաշատ համայնքի դպրոց տանող ճանապարհի հիմնանորոգում
- Արտաշատ քաղաքի Ներսիսյան փողոցի ասֆալտապատում

ՀՀ կառավարության 11.08.2016թ. N 823-Ն որոշմամբ Արարատի մարզպետարանին հատկացված գումարով – 1 ճանապարհ՝ 9.4 մլն դրամ.

- Նոյակերտ համայնքի ճանապարհի վերանորոգում

Մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանում և շահագործում՝ - 39.3 մլն դրամ

Ասիական զարգացման բանկի միջոցներով –2 մլրդ 101.7 մլն դրամ՝

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 1-ի Երևան–Արտաշատ՝ 19,6 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգում - 1 մլրդ 379.7 մլն դրամ:
- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 3-ի Երևան–Արտաշատ ճանապարհահատվածի 8 ուղեանցերի կառուցում և վերակառուցում – 722.0 մլն դրամ:

Համայնքային բյուջեների միջոցներով - 347.0 մլն դրամ:

7. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Մարզի վարչական տարածքը կազմում է 209 հազ. 003.2 հա, այդ թվում՝

գյուղատնտեսական նշանակության հողեր-156 հազ. 759.3 հա

քաղաքացիների սեփականություն-41 հազ. 876.7 հա

իրավաբանական անձի սեփականություն – 2 հազ. 573.7 հա

տնամերձ հողեր – 9 հազ. 113.4 հա

համայնքային սեփականության հողեր- 53 հազ. 155.9 հա

պետական սեփականության հողեր – 111 հազ. 332.3 հա

Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետարանը, ելնելով մարզում հողային սուղ պաշարների արդյունավետ և նպատակային օգտագործման խնդիրներից, առանձնակի ուշադրություն է դարձրել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության տրամադրման, հողերի պահպանման, հողերի նպատակային օգտագործման խնդիրների կարգավորման, հողային պաշարների կառավարման հարցերի կազմակերպման, հողաշինության ներտնտեսային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում է եղել համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական և համայնքային սեփականության հողերը օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության տրամադրելու և վարձավճարների գանձումների ապահովման խնդիրները:

Համայնքների հետ տարվող հետևողական աշխատանքի արդյունքում 2016 թվականին համայնքների վարչական սահմաններում ընդգրկված 84745.3 հա պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից (բացառությամբ գյուղատնտեսական այլ հողատեսքերից) նախատեսված 38473.0հա դիմաց վարձակալության է տրամադրվել 41002.7 հա: Վարձակալած հողամասերի համար հաշվարկված 90.316 մլն

դրամ վարձավճարի դիմաց, հաշվետու ժամանակաշրջանում գանձվել է 89.295 մլն դրամ գումար:

Հաշվետու ժամանակաշրջանում առանձնակի ուշադրություն է դարձվել համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի սահմանների հստակեցման և փոփոխման վերաբերյալ բարձրացված հարցերին:

Այդ նպատակով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում ստեղծված աշխատանքային խմբի հետ միասին քննարկվել են համայնքների կողմից բարձրացված հարցերը և տրվել են համապատասխան լուծումներ:

Մարզպետարանն իր անմիջական մասնակցությունն է ունեցել համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքներին: Համայնքների կողմից կազմվել է և մարզային հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 36 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, որոնց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

Կարևորելով հողերի ճիշտ և նպատակային օգտագործման տրամադրելու խնդիրները՝ ինչպես նաև ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի պահանջներով, առանձնակի ուշադրություն է դարձվել համայնքների, ինչպես նաև պետական միջոցներով պատվիրված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները շահագրգիռ նախարարությունների հետ համաձայնեցնելու, պարզեցված կարգով համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքներին:

Համայնքում քաղաքաշինական և հողաշինական խնդիրները կանոնակարգելու նպատակով համայնքները ձեռնամուխ են եղել պարզեցված կարգով բնակավայրի գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքներին:

Հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվել են թվով 6 համայնքների գլխավոր հատակագծերը:

Ընդհանուր թվով մարզի 25 համայնքներ ունեն սահմանված կարգով հաստատված բնակավայրերի գլխավոր հատակագծեր, իսկ 5 համայնքներում այդ աշխատանքների կատարումը ընթացքի մեջ է:

Ընդ որում մարզի 97 համայնքներից 59-ը ունեն հողաշինական և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, որից 25-ը հաստատվել է սահմանված կարգով:

Վարչական հսկողության ծրագրի շրջանակներում մարզի թվով 33 համայնքներում կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում հայտնաբերված հողային օրենսդրության պահանջների խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են համապատասխան ցուցումներ, իսկ թվով 5 համայնքի ղեկավար ենթարկվել է վարչական պատասխանատվության և նշանակվել է տուգանք 100-150 հազար դրամ գումարի չափով:

8.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղատնտեսության ոլորտի բազմակողմանի ուսումնասիրությունը, ագրարային բարեփոխումների ճանապարհով մարզի գյուղացիական տնտեսություններին օգնության կազմակերպումը, գյուղատնտեսական աշխատանքներն ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում կատարելու համար խորհրդատվական աշխատանքները, ինչպես նաև արտադրված գյուղմթերքների անկորուստ հավաքի և իրացման համար աջակցությունը մշտապես գտնվել է մարզպետարանի ուշադրության կենտրոնում:

2016թ. ընթացքում բերքի տակ կատարված ցանքերը մարզում կազմել են 24543 հա՝ նախորդ տարվա 23911 հա-ի փոխարեն, որոնք նախորդ տարվա համեմատ ավելացել են 632 հա-ով:

Աղյուսակ № 1

№	ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ /հա	2016թ /հա/	Համեմատական 2016թ. 2015թ-ի

				նկատմամբ /հա/
1	Հացահատիկ և հատիկընդեղեն	7083	7272	+189
2	Բանջարեղեն	6643	6875	+232
3	Կարտոֆիլ	859	914	+55
4	Բոստան	1896	1947	+51
5	Կերային կուլտուրաներ	6956	7087	+131
6	Տեխնիկական մշակաբույսեր	474	448	-26
7	Ընդամենը ցանքսեր	23911	24543	+632
8	Պտուղ	7688	8073	+385
9	Խաղող	5113	5038	-75
10	Ընդամենը մշակվող հողեր (ներառյալ տնամերձ հողամասեր)	36712	37654	+1230

Հացահատիկի և հատիկընդեղենների ցանքերը 2016թ. ավելացել են 189 հա-ով, ավելացել է բանջարեղենի ցանքատարածությունները՝ 232 հա-ով, իսկ բոստանային կուլտուրաների ցանքերը՝ 51 հա-ով, կարտոֆիլի ցանքերը ավելացել են 55 հա-ով և կերային կուլտուրաների ցանքերը՝ 131 հա-ով, իսկ տեխնիկական /արևածաղիկ/ մշակաբույսերի տարածքները պակասել է 16 հա-ով:

2016թ. մարզին հատկացվել է 3840 տ ազոտական պարարտանյութ, որից ներկրվել է 3021.55 տ, կալիումական պարարտանյութ՝ 132.25 տ, որից ներկրվել է 83.3 տ, ֆոսֆորական պարարտանյութ՝ 151.0 տ, որից ներկրվել է 81.45 տ:

2016թ. պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 320 000 լ դիզելային վառելիք, որից ներկրվել է 90 343 լ:

2016թ գարնանային գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար մարզին հատկացվել է գարնանացան գարու 49000 կգ և առվույտի 1705 կգ սերմացուներ:

2016թ. մարզին հատկացվել է 304.4 կգ «Ռոդիֆակում Ս» տիպի մկնասպան թունանյութ և կազմակերպվել է պայքար կրծողների դեմ 3805 հա ցանքատարածություններում:

2015-2016թթ. արտադրված գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ № 2

№	Մշակաբույսի անվանումը	2015թ. /տոննա/	2016թ. /տոննա/	2016թ-2015թ-ի նկատմամբ /տոննա/
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	34527	34262	-265
2	Բանջարեղեն	346577	311810	-34767
3	Կարտոֆիլ	29190	30268	+1078
4	Բոստան	88340	78383	-9957
5	Կերային կուլտուրաներ	235639	220087	-15552
6	Պտուղ	90126	74662	-15464
7	խաղող	125274	75934	-49340

2016թ նախորդ տարվա համեմատ ավել է արտադրվել կարտոֆիլ 1078 տոննա, պակաս է արտադրվել հացահատիկ և հատիկաընդեղեն՝ 265 տոննա, բանջարեղեն՝ 34767 տոննա, բոստան՝ 9957 տոննա, կերային կուլտուրաներ՝ 15552 տոննա եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով:

2016թ պակաս է արտադրվել 15464 տոննա պտուղ և 49340 տոննա խաղող, որի պատճառը գարնանային ցրտահարությունն էր:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2016թ մարզում կառուցվել է 6 հակակարտային կայանքներ: Գործող 92 հակակարկտային կայանքները հասցվել է 98-ի:

Մարզում գործող բանջարեղենի, պտղի և խաղողի վերամշակող ձեռնարկությունները կարողացել են մթերել հողօգտագործողների արտադրած բանջարեղենի, պտղի և խաղողի բերքը: Մարզի գյուղացիական տնտեսություններից

2016թ. բանջարեղենի, պտղի և խաղողի բերք են մթերել նաև "Սպայկա" ՍՊԸ-ն և անհատ ձեռներեցները:

Մարզպետարանի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում արտադրված 75934 տոննա խաղողից վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 52325.8 տոննան, մնացած 23608.2 տոննա բերքն իրացվել է շուկաներում և արտահանվել "Սպայկա" ՍՊԸ-ի և անհատ ձեռներեցների կողմից:

Մարզի համայնքների անասնաբույժների աշխատանքները մարզպետարանի կողմից վերահսկվել են, և ժամանակին կատարվել են պետական ծրագրով նախատեսվող բոլոր միջոցառումները:

Մարզում հայտնաբերվել է բրոցելիոզ հիվանդության դեպքեր: Սանիտարական սպանդի են ենթարկվել 72 գլուխ խոշոր և 117 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ:

Մարզում չի հայտնաբերվել թռչնագրիպի, սիբիրախտի, խոզի «Աֆրիկյան ժանտախտ» հիվանդության բռնկման դեպքեր, աշխատանքներ են տարվել դրանց կանխման ուղղությամբ:

Հակահամաճարակային միջոցառումներն արդյունավետ ու ժամանակին կատարելով՝ հնարավոր եղավ խուսափել անասնապահական մթերքների միջոցով փոխանցվող հիվանդությունների զարգացումից ու տարածումից:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ անասնագլխաքանակի համեմատականը նախորդ տարվա համեմատ ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Անասնատեսակը	2015թ.	2016թ.	Աճը %
Խոշոր եղջերավորներ /գլուխ/	46492	46615	100.3
Որից՝ կովեր /գլուխ/	17309	17552	101.4
Խոզեր /գլուխ/	19382	20959	108.1
Մանր եղջերավոր /գլուխ/	93162	98524	105.8
Թռչուններ /թև/	357391	391705	109.6
Մեղվաընտանիքներ /հատ/	13000	14031	107.9

Մարզում նկատվում է անասնագլխաքանակի աճ՝ խոշոր եղջերավոր անասուններ 100.3%, մանր եղջերավոր անասուններ 105.8 %, խոզեր 108.1 %, թռչուններ 109.6 %, մեղվաընտանիքները ավելացել են 107.9 %:

Մարզում տեղադրվել է 260 հատ ֆերոմոնային թակարդներ տարբեր մշակաբույսերի դաշտերում: Բաժանվել են տեղեկատվական թերթիկներ և իրականացվել են մասնագիտական խորհրդատվություններ:

Գյուղացիական տնտեսություններում առկա գյուղատնտեսական մեքենաների 2015-2016թթ քանակի և սարքինության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Գյուղատնտեսական Տեխնիկա		**2015թ հունվարի 1-ի դրությամբ**		**2016թ հունվարի 1-ի դրությամբ**	
		Առկա քանակը /հատ/	Սարքինության մակարդակը /%/	Առկա քանակը /հատ/	Սարքինության մակարդակը /%/
1	Բեռնատար ավտոմեքենա	1101	76.9	1101	76.9
2	Կոմբայն	35	88.6	35	88.6
3	Շարքացան	171	90.6	172	90.7
4	Կցասայլակ	575	87.3	576	87.5
5	Կուլտիվատոր	282	91.8	284	93.7
6	Հավաքիչ-մամլիչ	98	91.8	101	91.1
7	Տրակտոր-գութան	387	92.2	389	92
8	Խոտհնձիչ	113	87.6	115	88.7
9	Տրակտոր	1276	80.9	1282	81
10	Կերհավաք կոմբայն	21	85.7	22	86.4

11	Հատիկազտիչ մեքենա	32	84.4	32	84.4

Չնայած 2016թ մարզում տրակտորների քանակը ավելացել է 6 հատով, կերհավաք կոմբայնները 1 հատով, շարքացան 1 հատով, կցասայլակ 1 հատով, կուլտիվատոր 2 հատով, հավաքիչ-մամլիչ 3 հատով, խոտհնձիչ 2 հատով, տրակտոր-գութան 2 հատով, սակայն, դա դեռևս շատ քիչ է և համայնքների գերակշիռ մասն ունի տրակտորների, վարող, ցանող, սրսկիչ մեքենաների, հնձող և այլ գյուղացիական գործիքների կարիք:

Մարզի հողօգտագործողներին ոռոգման ջրի մատակարարման գործի արդյունավետ կազմակերպման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վարձավճարների հավաքագրման, ինչպես նաև միջտնտեսային ու ներտնտեսային ոռոգման ցանցերի սպասարկման աշխատանքներից է կախված մարզի գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը:

Մարզի 6 ջրօգտագործող ընկերությունների միջոցներով վերանորոգվել են պոմպակայանները, խորքային հորերը, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ջրատարները: Ջրօգտագործող ընկերությունները մարզպետարանի աջակցությամբ կարողացել են անխափան ոռոգման ջուր մատակարարել ջրօգտագործողներին:

9.ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում համակարգված աշխատանք է կատարվել ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, մանկավարժական կոլեկտիվներում աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ՀՀ Արարատի մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, այդ թվում՝ 21 հիմնական, 86 միջնակարգ և 5 ավագ դպրոցներ:

Մարզի 112 հանրակրթական դպրոցներում 2016-2017 ուսումնական տարում 32805 աշակերտով կոմպլեկտավորվել է 1644 դասարան: Աշակերտների թիվն անցած ուսումնական տարվա համեմատ ավելացել է 307-ով, իսկ դասարանների թիվը՝ 7-ով: Դասարանների միջին խտությունը մարզում կազմում է 19.95 աշակերտ (հանրապետական միջինը - 17.8 աշակերտ):

Մարզի 112 հանրակրթական դպրոցներում աշխատում են 3202 ուսուցիչներ և 1391 վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ: Ուսուցիչներից 2786-ը կանայք են (87%), 416-ը տղամարդ (13%): Մանկավարժներից 2913-ը ունեն բարձրագույն կրթություն (90.2 %) իսկ 289-ը՝ միջնակարգ մասնագիտական: Դասավանդող ուսուցիչների 16%-ը աշխատում են մինչև 0.5 , 60%-ը՝ 0.5-ից մինչև 1, իսկ 24%-ը մեկ դրույք և ավելի ծանրաբեռնվածությամբ:

Մարզի ուսումնական հաստատությունները 2016-2017 ուստարին սկսել են՝ առաջնորդվելով ԿԳ նախարարի հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանով: Դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների կողմից սահմնված աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի համապատասխան գործակիցների կիրառմամբ: Տարիֆիկացիաները հաստատվել են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին>> համապատասխան:

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում կրթություն է ստացել 31460 աշակերտ: 2436 աշակերտ ավարտել է 9-րդ, 1644-ը՝ 12-րդ դասարանները:

Մարզի ուսումնական հաստատություններում աշխատում են 4 վաստակավոր մանկավարժ, ՀՀ պետական պարգևների, ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ԿԳ նախարարի և ՀՀ Արարատի մարզպետի շնորհակալագրերի և պատվոգրերի արժանացած շատ ուսուցիչներ: 35 ուսուցչի շնորհվել է որակավորման տարակարգի 1-ին աստիճան:

Հաշվետու ժամանակահատվածի համար հունվար և սեպտեմբեր ամիսներին կազմվել են մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների ամփոփ հաստիքացուցակները և ներկայացվել մարզպետի հաստատմանը:

2015 թվականի հունվարից մարզում ներդրվել է ազգային դպրոցական սնունդ ծրագիրը:

Ծրագրի իրականացման համար պետական միջոցների հաշվին մարզին 2016 թվականի համար հատկացվել է շուրջ 326 մլն. դրամ գումար(մեկ երեխայի համար 140 դրամ):

Ծրագրի շրջանակներում մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցներին կից գործող նախակրթարանների 14787 երեխաների տրվում է դպրոցական սնունդ՝ ընդ որում 88 դպրոցում տաք, իսկ 19 դպրոցում չոր սնունդ:

Ծրագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսավորմամբ մարզի բոլոր դպրոցներին 2015 թվականին անվճար տրամադրվել են 610 հատ սառնարաններ, ջրատաքացուցիչներ, էլեկտրական ջեռուցիչներ, խմոր հարող մեքենաներ և էլեկտրական կշեռքներ:

2016թ. նույն ծրագրի շրջանակներում մարզի 7 դպրոցների տնօրեններ և խոհարարներ փորձի փոխանակման և վերապատրաստնման համար մասնակցել են Տամբով քաղաքում կազմակերպված դասընթացներին:

«Երեխաների սնուցման համաշխարհային ֆորումի» շրջանակներում սեպտեմբերի 8-ին աշխարհի մոտ 40 պետությունների ներկայացուցիչներ այցելել են Արարատի մարզ և 6 հանրակրթական դպրոցներում ծանոթացել սննդի կազմակերպման բնագավառում արձանագրված ձեռքբերումներին:

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից ներառական կրթություն իրականացնելու իրավունք ունեն 24-ը, որոնցից 21-ը այդ իրավունքը ստացել է 2016 թվականին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 341 երեխաներ ստանում են ներառական կրթություն:

Մարզի դպրոցներում մարզպետի 15.03.2016թ. N 19 որոշմամբ, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված <<ՀՀ պետական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի խորհրդի ձևավորման կարգի համաձայն, հաստատվել են խորհուրդների կազմերը:

Մարզի 14 դպրոցներում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման հիմքով մարզպետի համապատասխան որոշումներով սահմանված ժամկետներում կատարել են խորհուրդների կազմերի փոփոխություններ:

Մարզի Այգեպատի, Ղուկասավանի, Այգեզարդի, Դարակերտի, Հովտաշատի, Նոր Խարբերդի թիվ 2 և Բյուրավանի միջնակարգ դպրոցներում տնօրենները 65 տարին լրանալու հիմքով ազատվել են զբաղեցրած պաշտոններից, կայացած մրցույթների արդյունքում այդ դպրոցներում ընտրվել են նոր տնօրեններ: 16 դպրոցներում առաջացած տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի արդյունքում վերընտրվել են նախկին տնօրենները:

2015- 2016 ուսումնական տարում ուսման տարեկան առաջադիմությունը մարզի հանրակրթական դպրոցներում կազմել է 99.6% (անցած ուսումնական տարվա համեմատ գրանցվել է 0.2% աճ), ուսման որակը 38.7% (0.5 % աճ):

Հանրակրթական դպրոցներում սովորող 4330 աշակերտներ /13.2%/ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն և պարգևատրվել գովասանագրերով (3% աճ):

Ստեղծվել են օլիմպիադայի առարկայական հանձնաժողովներ, կազմվել են առաջադրանքները, Արարատի մարզպետի կարգադրությամբ սահմանվել է ժամանակացույցը: 2016թ. փետրվարի 3-ից 17-ը տեղի է ունեցել օլիմպիադայի տարածքային փուլը: Փետրվարի 20-ից մարտի 9-ը, ըստ ԿԳ նախարարության սահմանած ժամանակացույցի, անցկացվել է օլիմպիադայի մարզային փուլը, որին մասնակցել է 378 աշակերտ: Մարզային ստուգող հանձնաժողովների կողմից հանրապետական փուլ է երաշխավորվել 80 աշակերտ: Հանրապետական փուլի արդյունքներով 2 աշակերտ արժանացել է առաջին կարգի դիպլոմի, 2-ը՝ 2-րդ կարգի, 3-ը՝ 3-րդ կարգի դիպլոմի, 12-ը՝ գովասանագրի:

Մարզի հանրակրթական դպրոցներում զգալիորեն մեծացել է հետաքրքրությունը <<Շախմատ>> առարկայի նկատմամբ: Շախմատի օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցած 94 թիմերից մարզային փուլին մասնակցել են 3 թիմեր: Մարզային փուլի արդյունքներով Արտաշատ քաղաքի ավագ դպրոցի թիմը մասնակցել են օլիմպիադայի հանրապետական փուլին: Արտաշատի ավագ դպրոցի թիմը գրավել է 8-րդ տեղը:

Մարզում լուրջ հաջողություններ են գրանցվել շախմատ մարզաձևում: Բյուրավանի միջնակարգ դպրոցի շրջանավարտ 16 ամյա Հայկ Մարտիրոսյանը 2016 թվականին Ռուսաստանի Խանտի Մանսիյսկ քաղաքում կայացած շախմատի մինչև 16 տարեկանների մրցաշարում դարձել է աշխարհի չեմպիոն: Արտաշատի թիվ 1 դպրոցի աշակերտ Գրիգոր Դավթյանը և Այգեպատի դպրոցի աշակերտ Արշակ Մելքոնյանը իրավունք են ձեռք բերել մասնակցելու շախմատի Եվրոպայի պատանիների առաջնությանը:

2016 թվականին անցկացված <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի մարզային փուլի արդյունքներով մարզի լավագույն տնօրեն է ճանաչվել Մխչյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Աննա Ավագյանը, լավագույն ուսուցիչ՝ Ավշարի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Մարիամ Խաչատրյանը: Աննա Ավագյանը մրցույթի հանրապետական փուլում ռազմահայրենասիրական դաստիարակության բնագավառում ձեռքբերումների համար արժանացել է նոմինացիայի և պարգևատրվել համակարգչով:

ՀՀ ԿԳ նախարարության և Հայ առաքելական եկեղեցու կողմից անցկացվող <<Լավագույն ուսուցիչ>> մ րցույթին մասնակցելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացվել 7 լավագույն ուսուցիչների տվյալներ: Մրցույթի եզրափակիչ փուլում Վեդի ք. N 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի Անահիտ Թևոսյանը արժանացել է 2-րդ կարգի դիպլոմի և դրամական պարգևի, իսկ Սուրենավանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նաիրա Ջեյնալյանը՝ 3-րդ կարգի դիպլոմի և դրամական պարգևի:

2016 թվականի ընթացքում նպատակային աշխատանք է տարվել աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ:

2016 թվականի ընթացքում դպրոցներին են բաշխվել 1-4-րդ դասարանների 57100 դասագիրք, 3050 ուսումնամեթոդական գրականություն, 1619 դասամատյան, ԿԳՆ ԿԱԻ կողմից տրված շուրջ 1000-ից ավել ուսումնական ամսագրեր ու տեղեկագրեր, ԴՇՀ-ի միջոցով տպագրված 31752 դասագիրք, պետբյուջեի միջոցներով՝ 6348 դասագիրք:

Ծնողների կողմից կատարվել է պլանավորված 88.58 մլն. դրամի ներդրում, որը փոխանցվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամի դպրոցների բանկային ենթահաշիվներին: Սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին 2015-2016 ուսումնական տարում տրամադրել է 10215.9 հազար դրամ գումար:

Մարզում անվճար դասագրքեր են ստացել տարրական դասարանների բոլոր աշակերտները և 5-12-րդ դասարանների 3605 աշակերտներ (ընդ. 17778 աշակերտ):

Մարզի դպրոցներում առկա է 1682 համակարգիչ, 1260 համակարգչային սարքավորումներ, 119 համակարգչային դասարան: Մեկ դպրոցին բաժին է ընկնում 15 համակարգիչ, իսկ մեկ համակարգչին՝ 19.3 աշակերտ: Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով:

2016թ. ընթացքում Արարատի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, ռազմադաշտային պարապմունքներ, ինքնաձիգով և մարտական փամփուշտներով կրակային պատրաստության պարապմունքներ:

Մարզում գործող 112 հանրակրթական դպրոցներից 110 հանրակրթական դպրոցներ ունեն նախնական զինվորական պատրաստության դասասենյակներ, մնացած 2-ը հիմնական դպրոցներ են, որոնք նախկինում չեն ունեցել զինղեկի հաստիք և շենքային պայմանները բավարար չեն ՆԶՊ դասասենյակ ունենալու:

Մարզի 45 դպրոցների ՆԶՊ և այլ առարկայական դասասենյակներ անվանակոչվել են համայնքի զոհված ազատամարտիկների անուններով:

Մարզում գործող 94 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված են 6077 երեխաներ, որից 5463-ը 71 մանկապարտեզներում իսկ 614 դպրոցահեն 23 հաստատություններում:

10. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արարատի մարզում պետական առողջապահական ծրագրերի, մարզային ենթակայության պետական առողջապահական հիմնարկների աշխատանքների, բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, ձմեռային և ամառային զորակոչի ընթացքում նախազորակոչային տարիքի անձանց կցագրման և զորակոչային տարիքի անձանց բուժօգնության կազմակերպումը և բժշկական օգնության ծառայությունների ծավալների ներդրումն իրականացվել են Հայաստանի Հանրապետության օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների ու այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

Մարզպետարանի աջակցությամբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մարզում իրականացվել են.

ա) Համաշխարհային բանկի վարկային,

բ) անվճար ծննդօգնության,

գ) երեխաների (0-7տ) անվճար բուժօգնության

դ) շտապ բուժօգնության բարելավման,

ե) անհետաձգելի բուժօգնության,

զ) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տարափոխիկ հիվանդությունների և իմունականխարգելման,

է) Տուբերկուլոզի դեմ պայքարի ԴՕՏՍ և ԴՕՏՍ + ,

ը) զորակոչային տարիքի անձանց պատվաստումների կազմակերպման,

թ) Ձինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության,

ժ) սոցիալական փաթեթի շահառուների բժշկական օգնության և սպասարկման,

ի) ապահովագրական կազմակերպությունների շահառուների բժշկական օգնության իրականացման ծրագրերը:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական քննություններն, ինչպես նաև հիվանդանոցային հետազոտություններն ու բուժումն իրականացվել են ՀՀ Արարատի մարզպետի 27.01.2016թ. թիվ 10 որոշման համաձայն՝ մարզի չորս բժշկական կենտրոնների կողմից, ողջ ծավալով: Այդ աշխատանքների լիարժեք կատարման համար մարզի բուժհաստատություններն ապահովված են կադրային ներուժով և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների համար անհրաժեշտ նյութերով ու բուժսարքավորումներով:

Իրականացվել են հրամանատարաշտաբային ուսումնավարժանքներ պատերազմական և արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Կազմակերպվել են մարզի բժշկական կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների վերապատրաստումներ՝ ըստ ներկայացված պլանի, բուժանձնակազմի կարողությունների ստուգման և կատարելագործման նպատակով:

Ազգաբնակչության գանգատները և ահազանգերը՝ ուղղված ՀՀ կառավարություն, ՀՀ առողջապահության նախարարություն ու մարզպետարան, դրական լուծումներ են ստացել օրենքով սահմանված ժամկետներում:

Ձանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութերին համապատասխան ընթացք են տրվել:

Կազմակերպվել և առանձնահատուկ աջակցություն է ցուցաբերվել բազմազավակ ընտանիքների անդամների առողջական խնդիրների լուծմանը: Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունների ընթացքում ներկայացված առողջապահական խնդիրները լուծվել են հիմնականում մարզի առողջապահական հիմնարկներում: Հիվանդների մի մասի վերաբերյալ միջնորդագրեր են ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն՝ Երևանի տարբեր բժշկական հաստատություններում հետազոտությունների և բուժման նպատակով:

Առողջապահական շատ խնդիրների լուծման նպատակով քաղաքացիներին տրամադրվել են անհրաժեշտ ֆինանսական աջակցություն:

Մարզպետարանը ակտիվորեն համագործակցում է մարզի բնակչության առողջապահական խնդիրների լուծմամբ հետաքրքրված բոլոր կազմակերպությունների հետ:

Ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող 135 երեխաներ ուղեգրվել են Արաբկիր բժշկական համալիրի երեխաների-դեռահասների առողջության ինստիտուտի /ԵԴԱԻ/ Արտաշատի մասնաճյուղի երեխաների զարգացման վերականգնողական կենտրոն:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության արդյունքում մարզի բժշկական հաստատություններում 2016 թվականին շահագործման հանձնվեցին վերանորոգված և կահավորված վեց ծնողական կրթության կենտրոնները (Վեդու ԲԿ, Արտաշատի ԲԿ, Մասիսի ԲԿ, Տափերականի ԱԱՊԿ, Արևշատի ԱԱՊԿ և Մարմարաշենի ԱԱՊԿ):

2016 թվականին մեկնարկած Հայ Օգնության Ֆոնդի (ՀՕՖ) Երեխաների Աղքատության հաղթահարման ծրագրի երկրորդ փուլի ընթացքում մարզի առավել խոցելի համայնքներում սակավարյունության հետազոտություն իրականացվեց մինչև 6 տարեկան 1000 երեխաների մոտ: ՀՕՖ-ի հետ համագործակցված աշխատանքի արդյունքում մարզպետարանի կողմից ներկայացված ևս 40 տարբեր բարդության առողջական խնդիրներով երեխաներ բարեգործական ծրագրով հետազոտվեցին, իսկ նրանցից 22-ը

ՀՕՖ-ի միջոցով ստացան բժշկական բոլոր անհրաժեշտ միջամտությունները՝ վիրահատություններ, հիվանդանոցային բուժումներ և խորհրդատվություններ:

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ են ուղղորդվել պլաստիկ վիրաբուժության կարիք ունեցող 11 երեխաներ և 15 անոթային խնդիրներով մեծահասակ հիվանդներ, որոնց բուժսպասարկման աշխատանքները կիրականացվեն բարեգործական ծրագրի շրջանակներում:

2016 թվականին Հայկական ակնաբուժության նախագիծ բարեգործական հիմնադրամի «Լույս Հայի աչքերին» ծրագրի շրջանակներում մարզում հետազոտվել են 5783 անձինք, որոնցից 1800-ը՝ երեխաներ: ՀԱՆ-ի Աչքի շարժական հիվանդանոցում իրականացվել են 472 վիրահատությունների եւ լազերային բուժումներ: Սոցիալապես անահապով բնակիչներին տրամադրվել են 332 ակնոցներ: Մարզի 9 դպրոցներում կազմակերպվել են հանրային ուսուցման դասընթացներ:

Համագործակցելով Երևան քաղաքում տեղակայված, մարզին կցված բժշկական կազմակերպությունների հետ, իրականացվել են աշխատանքներ՝ ներգրավելով գլխավոր մասնագետների խումբը, որի նպատակն է եղել բարելավել մարզի բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակը:

2016 թվականին ՀՀ Արարատի մարզի Ռանչպար և Լանջազատ համայնքներում Բաց դռների օրեր են կազմակերպվել Երիտասարդ բժիշկների ասոցիացիայի մասնագետների կողմից, որի ընթացքում այցելուներին տրամադրվել են մասնագիտական խորհրդատվություններ և դեղորայք:

Մարզի բնակչության բուժկանխարգելիչ աշխատանքներն իրականացվել են 4 բժշկական կենտրոնների, 1 առողջության կենտրոնի, 1 ծննդատան, 50 գյուղական բժշկական ամբուլատորիաների (որից 14-ը համայնքային ենթակայության) և նրանց կազմի մեջ մտնող 42 բուժամանկաբարձական կետերի միջոցով , որտեղ աշխատում են 416 բժիշկներ, 906 միջին բուժաշխատողներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշման համաձայն ՀՀ Արարատի մարզի բոլոր 34 բժշկական հաստատությունները

վերակազմավորման ձևով դարձել են պետական ոչ առևտրային կազմակերպություններ և ստացել պետական ռեգիստրի գրանցման վկայականներ:

Մարզպետարանի ենթակայության 6 հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկում իրականացնող հաստատություններն ունեն 488 մահճակալի հաստատագրված ծավալ:

Մարզում բնակչության բուժսպասարկման որակի բարելավմանն է նպաստում ՀՀ կառավարության և առողջապահության նախարարության ռազմավարությունը՝ համապատասխան բարեփոխումների ծրագրերի ներդրումով:

2016թ-ին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մարզի առողջապահական համակարգի ֆինանսավորումը կազմել է 3,3 մլդ ՀՀ դրամ:

«Արտաշատի ԲԿ», «Մասիսի ԲԿ», «Վեդու ԲԿ», «Արարատի հիվանդանոց ԲԿ» և «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ներում ավելացել են համավճարով և վճարովի ծառայությունների մուտքերի գումարները, որը ուղղվել է առողջապահական հիմնարկների նյութատեխնիկական բազայի հարստացմանը և բուժսպասարկման որակի բարձրացմանը: 2016 թվականին մարզում համավճարով և վճարովի ծառայություններով մուտքերը կազմել են շուրջ 334 մլն. 300,0 հազար ՀՀ դրամ, որը 2015 թվականի մուտքերից ավել է 31,5 մլն ՀՀ դրամով:

Հետևողական աշխատանքներ են տարվում ստվերային գործունեության վերացման ուղղությամբ:

Բազմիցս կազմակերպվել են տնօրենների խորհրդակցություններ պարտքերի մարման, լրացուցիչ միջոցների հայթայթման և դոնոր կազմակերպությունների ներգրավման նպատակով՝ տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ ելնելով ՀՀ կառավարության, ՀՀ Արարատի մարզպետի և ՀՀ առողջապահության նախարարի որոշումներից և հրամաններից:

Առողջապահական հիմնարկներում գնումների գործընթացները կազմակերպվում են համաձայն 2010 թվականի դեկտեմբերի 12-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ

կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Մարզի 6 առողջապահական հաստատություններում 2016 թվականին իրականացվել է ներքին աուդիտ, որոնց արդյունքում հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը աուդիտորների կողմից գնահատվել են ցածր ռիսկային:

2016 թվականին մարզի հիվանդանոցներում բուժվել են 13848 հիվանդ (2015 թվականին՝ 13966 հիվանդ), մարզի բժշկական կենտրոններում գրանցվել են 324457 ամբուլատոր այցեր (2015 թվականին՝ 297777 այցեր), մարզի ծննդօգնության ծառայություններ իրականացնող հաստատություններում ծնվել են 2291 երեխաներ: Մայրական մահացության դեպքեր չեն արձանագրվել: Օձի խայթման 8 դեպքերում տուժածները համապատասխան հակաթույնը ստացել են առանց ուշացման՝ բուժվել են մարզի և Երևանի հիվանդանոցներում:

Կազմակերպվել է 146 քաղաքացիների առողջարանային վերականգնողական բուժումը, որից 7 երեխաներ՝ Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան առողջարանում:

Մարզային հանձնաժողովի կողմից հետազոտությունների և բուժման նպատակով 2016 թվականին մարզային բժշկական հաստատություններ ուղեգրվել են 71 հիվանդներ, իսկ 64 հիվանդների բուժումը կազմակերպվել է ՀՀ առողջապահության նախարարության միջոցով:

2016 թվականին իրականացվել է մարզին հատկացված մարդասիրական և կենտրոնացված ճանապարհով ստացված շուրջ 132 մլն. ՀՀ դրամի չափով դեղորայքի ստացումը և բաշխումը (2015 թ.՝ 81 մլն ՀՀ դրամի):

Մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային, սանիտարա-հիգիենիկ միջոցառումների, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով կազմվել է աշխատանքների կազմակերպման և իրականացման համատեղ ծրագիր, որում ընդգրկված են բոլոր շահագրգիռ ծառայությունները: Ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների արդյունքում զանգվածային կարանտինային վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ 2016 թվականի ընթացքում չեն արձանագրվել: Կառավարելի վարակիչ

հիվանդությունների դեմ իրականացված կանխարգելիչ պատվաստումներում մինչև 1 տարեկան երեխաների ընդգրկվածությունը 2016 թվականի ընթացքում կազմել է 98,0 %, որը բարձր է միջին հանրապետականից:

Մարզում առկա է յոթ բուժհաստատությունների տնօրենի թափուր հաստիք («Դարակերտի ԱԱՊԿ», «Խաչփարի ԲԱ», «Ռանչպարի ԲԱ», «Սիսի ԲԱ», «Նորամարգի ԱԱՊԿ», «Փ. Վեդու ԱԱՊԿ», «Սուրենավանի ԲԱ» ՓԲԸ-ներ), որտեղ նշանակվել են ժամանակավոր պաշտոնակատարներ, իսկ մրցույթների հայտարարությունները կտրվեն 2017 թվականին:

Համագործակցելով Երևան քաղաքում տեղակայված, մարզին կցված բժշկական կազմակերպությունների հետ, իրականացվել են աշխատանքներ՝ ներգրավելով գլխավոր մասնագետների խումբը, որի նպատակն է եղել բարելավել մարզի բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության որակը:

Հանդիպումներ են կազմակերպվել Արարատի մարզից Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողների հետ;

Երիտասարդ մասնագետներ են ընդունվել աշխատանքի «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ, որոնք համապատասխան պայմանագրերով ուղեգրվել են նպատակային վերապատրաստման՝ հետագայում պահանջվող կադրային համալրում ապահովելու համար:

ՀՀ ԱՆ հետ համատեղ պարբերաբար տրվել են հայտարարություններ բժիշկների թափուր տեղերը զբաղեցնելու նպատակով:

Հայ Օգնության Ֆոնդի ծրագրով 2016 թվականին վերապատրաստվել են 8 բժիշկներ:

ՀՀ ԱՆ նախաձեռնությամբ՝ մարզպետարանի հետ համատեղ, կրեդիտորական դասընթացների են մասնակցել և համապատասխան կրեդիտներ ստացել 228 բուժաշխատողներ: Այդ գործընթացը շարունակվելու է նաև հետագայում:

Մարզի բուժհաստատությունները համալրվել են անհրաժեշտ կադրերով, որոնք գործուղվել են նպատակային վերապատրաստման և որակավորման: Կազմակերպվել է մարզի բուժաշխատողների վերապատրաստման հետ դիպլոմային շարունակական

կրթման գործընթացը: Վերապատրաստումներ են կազմակերպվել նաև կրեդիտորական դասընթացների եղանակով: Թափուր մասնագետների տեղերի համար պահանջարկ է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարություն: Մարզը դեռևս ունի 3 վիրաբույժի, 3 անեսթեզիոլոգի, 3 մանկաբարձ-գինեկոլոգի, 2 ուռուցքաբանի, 1 հոգեբուժի, 1 նյարդաբանի, 1 մանկաբույժ,1 մամագրաֆիայի բժիշկ, 1 ուռոլոգի, 1 թոքաբանի, 1 ներզատաբանի և 1 բժիշկ նեոնատոլոգի պահանջարկ:

2016 թվականին Համաշխարհային Բանկի աջակցությամբ շահագործման են հանձնվել «Մխչյանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի(61,5 մլն) և «Լանջազատի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի(60 մլն) ամբուլատորիաների նորակառույց շենքերը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ ավարտվել են «Նորաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքները (37,5մլն):

ՀՀ Արարատի մարզի Գեղանիստ համայնքի միջոցներով սկսվել են «Գեղանիստի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի վերանորոգման աշխատանքները՝ շուրջ 20 մլն ՀՀ դրամ գումարի չափով:

Համաշխարային բանկի ծրագրով մեկնարկել են «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի հիմնական մասնաշենքի արդիականացման հիմնանորոգման աշխատանքները (1 մլրդ 549 մլն ՀՀ դրամի վերանարոգման աշխատանքներ, 920 հազար ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամի գումարի չափով բուժսարքավորումներ և գույք), որը նախատեսվում է ավարտել 2018 թվականին:

ՀՀ Արարատի մարզի հիվանդանոցային օգնություն ցուցաբերող հաստատությունները խիստ կարիք ունեն շենքերի հիմնական վերանորոգման, բուժական և ախտորոշիչ նորագույն սարքավորումների, կոշտ և փափուկ գույքի:

Մարզի 12 գյուղական բժշկական հաստատություններ ենթակա են կառուցման, 10-ը՝ հիմնանորոգման: 3 բժշկական կենտրոնների շենքերը կարիք ունեն հիմնանորոգման:

Մարզը կարիք ունի 3 ռեանիմոբիլի, 4 գծային և 2 ամենագնաց շտապօգնության մեքենաների: Մարզին անհրաժեշտ են նաև նոր սարքավորումներ, թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների սարքեր (համակարգչային, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆներ):

2016 թվականի ընթացքում մարզում մալարիայի դեպք չի արձանագրվել: Մարզպետարանը աջակցել է առողջապահական ծրագրեր իրականացնող իրավասու կազմակերպություններին գրիպի, սիրտանոթային, մանկական հիվանդությունների և բազմաթիվ այլ ժամանակակից պահանջարկ և հրատապություն ներկայացնող ծրագրերի վերաբերյալ:

2016 թվականի դեկտեմբերին առողջապահական հիմնարկները աշխատավարձի, սոցվճարների և հարկային պարտավորությունների մասերով պարտքեր չունեն:

11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2016թ-ին մարզպետարանը կազմակերպել և համակարգել է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության վերահաշվառումը, աջակցել է պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման, ընտանեկան և սոցիալական նպաստի համակարգի իրականացման և կատարելագործման աշխատանքների կազմակերպմանը, հիմնական խնդիր ունենալով իրականացնել սոցիալական արդարության վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական և նպատակային քաղաքականություն: Նպաստել է բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը, համագործակցել է մարզում բարեգործական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ, համակարգել նրանց գործունեությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի <<2016 թվականի ընտանեկան նպաստի,սոցիալական նպաստի,հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստների չափերը սահմանելու մասին>> թիվ 5-Ն որոշման, մարզում 2016թ-ի հունվարից անցկացվեց սոցիալական անձնագրերում ամրագրված տեղեկությունների փաստագրման նոր գործընթաց, նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման հասցեականության մեծացման, ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման և համակարգն էլ ավելի կառավարելի դարձնելու համար:

2016թ. համակարգում ընդգրկվեց 10297 ընտանիք, որից նպաստառուների ամսական միջին թիվը եղել է 8326 ընտանիք:

2016թ. ընթացքում ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության վճարման համար ֆինանսավորվել է 3 մլրդ. 176 մլն. 097 հազար 000 դրամ:

2016թ. ընթացքում յուրաքանչյուր ամիս շուրջ 449 ընտանիքի հատկացվել է հրատապ դրամական օգնություն:

Մարզի 4 ՍԱՏՄ-ների միջոցով 2016թ-ի ընթացքում առաջին դասարան հաճախող 1105 երեխաների ընտանիքների տրվել է 27 մլն. 625 հազար 000 դրամ և նորածին երեխա ունեցող 459 ընտանիքների 50.000 - ական դրամ օգնություն:

Հուղարկավորության միանվագ օգնություն է նշանակվել ընտանեկան նպաստի իրավունք ունեցող 18 ընտանիքի, յուրաքանչյուրին 50.000-ական դրամ գումար:

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ-ի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց տարվա ընթացքում ստացել են փոխհատուցում 340 անձ, ընդհանուր՝66 մլն.694 հազ. 166 դրամի չափով:

Մարզպետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվում զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքները: Նրանց նկատմամբ դրսևորվել է անհրաժեշտ հոգածություն, հնարավոր նյութական և բարոյական աջակցություն: Մարզի տարածքում բնակվող զոհված ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմանդամ, սակավ ապահովված ընտանիքների 470 երեխաներ ամռան ընթացքում անվճար հանգստացել են Հանքավանի ճամբարներում:

Աշխատանքները հատկապես ակտիվ են ընթացել զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների հաշվառման, բնակարանի հերթացուցակներում ընդգրկման ուղղությամբ: Բնակարանային պայմանների բարելավման նպատակով մարզպետարան դիմած ընդհանուր հաշվով 185 զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքների տվյալներ ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարություն:

Առանձնահատուկ հոգածություն է դրսևորվել Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցների, հաշմանդամների նկատմամբ: Կազմակերպվել են վետերանների և

հաշմանդամների խորհուրդների համատեղ նիստեր, հանդիպումներ, նրանց տրվել է դրամական օգնություն:

2016 թվականի ընթացքում ՍԱՏՄ - ների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տարեցների և հաշմանդամների հիմնահարցերի վարչության աշխատակիցների հետ համագործակցելով միայնակ և սոցիալապես ծայրահեղ անապահով 18 թոշակառուներ տեղափոխվել են տուն - ինտեռնատներ:

Մարզում բնակվող 11073 փախստական և քաղաքացիություն ստացած նախկին փախստականներից բնակարանի կարիքավոր են 525 ը:

Մարզի սոցիալապես անապահով 8429 ընտանիքների հատկացվել է DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքեր:

12. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում են մարզային ենթակայության <<Պարույր Սևակի տուն-թանգարան>> և <<Սպարապետ Վ. Սարգսյանի տուն-թանգարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային ենթակայության 71 մշակույթի տուն, 18 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց, 92 հանրային և 1 մարզային գրադարան, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության 1 պետական դրամատիկական թատրոն, ՀՀ գրողների միության Արարատի մասնաճյուղը:

2016թ երաժշտական և արվեստի 10 դպրոցների որպես ազգային և լարային նվագարանների վարձավճարի փոխհատուցում՝ 110 աշակերտի համար պետբյուջեից տրվել է 29 մլն 341 հազ. դրամ:

Թանգարանները 2016թ պետության կողմից սուբսիդավորվել են 17մլն 753.5 հազ դրամով:

Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման համար պետական բյուջեից մարզին հատկացվել է 4մլն 395.4 հազ դրամ:

Մշակույթի բնագավառում մարզպետարանի գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում նպատակաուղղվել է մարզային ենթակայության հաստատությունների աշխատանքների, մշակութային, պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը: Պարբերաբար ստուգվել է մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակը:

Նշվել են բոլոր պետական, ազգային տոները, հիշատակի օրերը, կազմակերպվել են փառատոներ, ցուցահանդեսներ, հոբելյանական երեկոներ, համերգներ և այլն: Մարզի ստեղծագործական խմբերը և անհատ կատարողները մասնակցել են հանրապետական մրցույթների և փառատոների՝ արժանանալով պատվավոր մրցանակների:

Հունիս – օգոստոս ամիսներին <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում 67 սփյուռքահայ պատանիներ հյուրընկալվել են մարզի քաղաքային և գյուղական համայնքներում:

Նշանակալի տեղ է հատկացվել զանգվածային միջոցառումներին՝ Անախության 25-րդ տարեդարձ, Տեառնընդառաջ, Վարդավառ, Ազգային նվագարանների, երգի, պարի փառատոն և այլ միջոցառումներ, որոնք աչքի են ընկել իրենց մասսայականությամբ:

Մարզում գործում են 8 մարզադպրոց և շախմատի ակադեմիայի 5 մասնաճյուղ: Մարզում կա 106 մարզադահլիճ, 3 ստադիոն, ֆուտբոլի 20 խոտածածկ խաղադաշտ, 8 լողավազան, 3 հրաձգարան:

2016թ. տարբեր մարզաձևերից անցկացվել են հուշամրցաշարեր, միջհամայնքային, տարածաշրջանային և մարզային առաջնություններ: Մարզը ակտիվորեն մասնակցել է հանրապետական տարաբնույթ միջոցառումների՝ ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող <<Լավագույն մարզական ընտանիք>> հանրապետական մրցույթ, Նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դպրոցական ռազմամարզական խաղեր, ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն

մարզական նախադպրոցական հիմնարկ>>, <<Մարզական փառատոն>>, ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող <<Լավագույն հաշմանդամ մարզիկ>>:

Մեր մարզիկները հաջողությամբ են հանդես գալիս տարբեր հանրապետական և միջազգային մրցաշարերում՝ գրավելով պատվավոր հորիզոնականներ (Եվրոպայի պատանիների 1 ոսկե և 1 արծաթե մեդալ՝ ազատ ոճի ըմբշամարտ մարզաձևից, Եվրոպայի պատանիների 1 արծաթե մեդալ՝ հեծանվային սպորտ մարզաձևից, և մինչև 16 տարեկանների աշխարհի 1 չեմպիոն, ՖԻԴԵ-ի վարպետ):

13. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2016թ. ընթացքում բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացվել է աշխատանքներ՝ մթնոլորտի վնասակար ներգործությունների վերացման, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կենսառեսուրսների կառավարման, կանաչ տարածքների ավելացման, թափոնների կառավարման, բուսական և կենդանական աշխարհի վերարտադրության ապահովման, բնապահպանական փորձաքննության, հողային ռեսուրսների և ընդերքի պահպանության ոլորտներում, ինչպես նաև բնապահպանական հսկողություն ըստ տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքային ծրագրի:

1. ՄԹՆՈԼՈՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Շարունակվել են շրջակա միջավայրի վիճակի և հիդրոօդերևութաբանական երևույթների դիտարկումները, ուսումնասիրությունները և կանխատեսումները: Մարզպետարանը համագործակցել է հիդրոօդերևութաբանական և արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ և վերջիններից ստացված ջերմաստիճանի, տեղումների և հնարավոր տարերային աղետների /հեղեղներ, կարկտահարություն/ վերաբերյալ տեղեկատվության մասին տեղյակ է պահել համայնքների ղեկավարներին և ազգաբնակչությանը:

Զոդի ոսկու կորզիչ ֆաբրիկայում /ՈԿՖ/, Լեռնամետալուրգիայի ինստիտուտի և տեղի բնապահպան մասնագետի կողմից ամենամսյա նախատեսված ժամանակացույցով կատարվում է հողի և օդի նմուշարկում՝ սահմանային թույլատրելի նորմերը չգերազանցելու նպատակով, չափումներ են կատարվում պիէզոմետրիկ հորերում, ստուգում դրենաժների աշխատանքը: Արարատի ցեմենտի գործարանի ցեմենտի աղացման և հավելանյութերի արտադրամասերում տեղադրվել են նոր փոշեորսման սարքավորումներ /ֆիլտրեր/: Մթնոլորտային օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիայի գերազանցման դեպքեր չեն արձանագրվել: Մթնոլորտային օդի աղտոտմանը նպաստում է մարզի համայնքներում, աղբավայրերում կուտակված մեծ թվով պոլիեթիլենի այրումից առաջացած, մարդկանց առողջությանը վտանգող ,խիստ թունավոր նյութերը: Մարզպետարանը մասնակցում է մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով միջոցառումների ծրագրերի մշակմանը և աջակցում է միջոցառումների իրականացմանը մարզի տարածքում:

2. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

2016թ. ընթացքում իրականացվել է հսկողություն մարզի «Ազատի» և «Զանգակատան» ջրամբարներում ջրի կուտակման և ոռոգման շրջանում պլանային ջրթողունակության աշխատանքների նկատմամբ:

ՀՀ Արարատի մարզում 2013թ-ից առ այսօր լուծարվել է 45, կոնսերվացվել՝ 99 և ներկայումս առկա է 1017 հորատանցք, դրանցից շահագործվում է 832-ը, ժամանակավորապես չի շահագործվում 185-ը:

Ինքնաշատրվանող խորքային հորերում փականային եղանակով կարգավորման արդյունքում ջրառը իջեցվել է տնտեսության ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակին: Հետագայում նախատեսվում է ավտոմատ կառավարման և կիսափակ ջրամատակարարման համակարգ, որը թույլ կտա կրճատել փաստացի ջրառի ծավալը: Ուժեղացվել է ջրաքանակի արդյունավետ օգտագործման և վերահսկողական նպատակով կատարվող աշխատանքները:

Մարզի 20 համայնքներում /Մրգավան, Բերքանուշ, Բուրսատան, Դիմիտրով, Լանջազատ, Արաքսավան, Դվին, Վերին Դվին, Հովտաշատ, Հայանիստ, Դարբնիկ, Սիփանիկ, Սիս, ք. Մասիս, Այնթապ, Մարմարաշեն, Սայաթ Նովա, Զորակ, Դաշտավան, Դարակերտ/ իրականացվել է 90.5 կմ երկարությամբ շուրջ 175.0 մլն դրամ արժողությամբ դրենաժների մաքրում և վերականգնում: Աշխատանքների կատարման որակը և քանակը հսկվում է մարզպետարանի անմիջական մասնակցությամբ: ԱԻ մարզային ՓՎ մասնագետների հետ համատեղ կազմած ժամանակացույցով շրջայցերի ընթացքում սահմանվել է մշտական հսկողություն գետի վտանգավոր հատվածներում հունի վիճակի հիդրոտեխնիկական կառուցվածքների կայունության, ավազի արդյունահանման ընթացքում սպառնացող վտանգը կանխարգելելու, ապօրինի գետավազի արդյունահանումը դադարեցնելու նպատակով:

3. ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

Բուսական և կենդանական աշխարհը, հատուկ պահպանվող տարածքների պաշտպանությունը միշտ էլ գտնվել է մարզպետարանի հսկողության տակ:

«Խոր Վիրապ» արգելավայրում շարունակվել են համապատասխան աշխատանքներ տանել չվող թռչունների և ջրաճահճային բույսերի զարգացման նպատակով: 2016թ ընթացքում Արարատի մարզային "Օրհուս" կենտրոնը առանձին կազմակերպությունների հետ համագործակցել և իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ մասնավորապես կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, մամուլի ասուլիսներ, դասընթացներ, իրազեկության բարձրացման միջոցառումներ:

Մարզպետարանը մասնակցել է «"Խոսրովի անտառ" պետական արգելոցի» բնության հատուկ պահպանվող տարածքների սահմանների ճշգրտման, կառավարման պլանով արգելոցի տարածքում նախատեսվող նոր հողամասերի ընդգրկման աշխատանքներին:

Մարզպետի գրություն - շրջաբերականի միջոցով համայնքների ղեկավարներին է ներկայացվել «Կենդանական աշխարհի օբյեկտների /որսհանդակների/ պահպանության,

պաշտպանության, օգտագործման կարգը և որսահանդակների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.08.2016թ. № 860-Ն որոշումը:

4. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

Ապօրինի հողօգտագործման վերացման նպատակով համայնքի ղեկավարներին տրվել է համապատասխան առաջարկություններ:

Հողերի պահպանության, դեգրադացիայի կանխման, հողատարման և աղտոտվածության աստիճանը նվազագույնի հասցնելու նպատակով իրականացվել են հողերի մոնիթորինգ - դիտարկումներ: Մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել է հողի բերրի շերտի հանման, պահպանման և տեղափոխման դեպքերում ղեկավարվել ՀՀ կառավարության 08.09.2011թ-ի №1396-Ն որոշման պահանջներով:

5. ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

Կազմված աղբահանության սխեմաների համաձայն, մարզի համայնքներում առանձնացվել են տարածքներ՝ կենցաղային աղբի կուտակման համար և վերահսկվել է սանիտարական մաքրման սխեմայով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացը:

Մարզի համայնքներում իրականացվել է կենցաղային և շինարարական աղբի հավաքում, փոխադրում, պահում համապատասխան աղբավայրերում հիմնականում համայնքային բյուջեների հաշվին, մասամբ բնակչությունից ավագանու կողմից հաստատված գումարի չափաբաժնով: Քաղաքային համայնքներում աղբահանությունը կատարվում է ամեն օր, իսկ գյուղական համայնքներում՝ շաբաթական մեկ – երկու անգամ:

Վարչական հսկողություն է իրականացվել բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի ղեկավարների գործունեության նկատմամբ: 2016 թ մարզի 7 համայնքների ղեկավարների առաջարկվել է միջոցներ ձեռնարկել

իրենց վարչական տարածքի սահմաններում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացման ուղղությամբ:

Մարզպետարանը մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «Առկա լավագույն տեխնոլոգիայի և բնապահպանական իմաստով լավագույն գործունեություն» մեթոդաբանության ներդրմամբ «Կոշտ կենցաղային թափոնների կառավարում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար» ուսուցողական սեմինարին:

Մարզպետարանը հավանություն է տվել «ՀՀ 2017-2036թթ-ի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծին:

ՀՀ կառավարության 2006թ ապրիլի 20-ի "Թափոնների գոյացման վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին" № 500-Ն և ՀՀ կառավարության 2006թ հուլիսի 13-ի "Թափոնների հեռացման վայրերի կարգը սահմանելու մասին" №1180-Ն որոշումներով հաստատված կարգի պահանջների համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարություն աղբավայրերի հեռացման վայրերի ռեեստրային հաշվետվություններ են ներկայացրել մարզի 3 համայնքներ (Նոյակերտ, Շահումյան, Մխչյան):

Մարզի բոլոր համայնքներում իրականացվում է աղբահանություն, հաշվառվել են աղբավայրերը և վերահսկվում է այդ տարածքների օրինական ձևակերպման գործընթացը:

6. «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՈԼՈՐՏ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի համաձայն Արարատի մարզպետարանն աջակցել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում կազմակերպված Ախուրյանի ջրավազանային տարածքի կառավարման պլանի գործընթացի վերաբերյալ հանրային քննարկումներին:

Մարզպետարանը իր մասնակցությունն է ունեցել նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպված «Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոցի» կառուցման աշխատանքների նախագծի հանրային քննարկմանը:

Ուրցաձորի գյուղապետարանում բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «Վեդիի ջրամբարի կառուցում Արարատյան հարթավայրի ոռոգման համար» նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներին իր ակտիվ մասնակցությունն է ունեցել մարզպետարանը:

Վերոհիշյալ փաստաթղթերի ուսումնասիրության, հասարակական լսումների կազմակերպման, իրականացման վերաբերյալ արդյունքները սահմանված ժամկետներում տրամադրվել են ՀՀ բնապահպանության նախարարությանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարանի կողմից կազմված և մշակված բնապահպանական ծրագրում ներառվել են բնապահպանական մարզային նշանակության միջոցառումներ, որտեղ ընդգրկված են մթնոլորտի աղտոտման մոնիթորինգի, ապօրինի հողօգտագործման կանխարգելման աշխատանքների նկատմամբ վերահսկողություն, մարզի տարածքում տարերայնօրեն առաջացող աղբավայրերի վերացում, հաշվետվությունների վերլուծություն, որի ընթացքի մասին ժամանակին իրազեկվել են բնապահպանական պետական տեսչության տարածքային ստորաբաժանմանը:

Հսկողություն է իրականացվել մարզպետարանին ենթակա կառույցների՝ դպրոցների, բուժսպասարկման կազմակերպությունների, մանկապարտեզների և իրենց տնօրինության տակ գտնվող տարածքներում բնապահպանական օրենսդրության կատարման նպատակով: Ստուգայցերի ընթացքում Այգեստան համայնքում արձանագրվել է ծառահատման 1 դեպք, որի մասին տեղեկացվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Արարատի տարածքային բաժնին: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի №66 հոդվածի համաձայն քաղաքացուն տուգանել են 50 հազար դրամի

չափով, իսկ բնությանը պատճառված վնասի չափը կազմել է 52500 դրամ, որը նույնպես վճարել է վնասարարը:

Մարզպետարանը աջակցություն է ցուցաբերում որսագողության, ապօրինի ձկնորսության պայքարի դեմ միջոցառումներին առնչվող պետական ծրագրերի մշակմանը:

14. ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Արարատի մարզը ՀՀ արդյունաբերական զարգացած մարզերից է: Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը կազմում է ՀՀ արդյունաբերության ծավալի 12,2%-ը, նախորդ տարվա 10,7 %-ի դիմաց:

2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մարզում գործել են 103՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 98-ի փոխարեն, արտադրական ձեռնարկություններ, որոնցից առավել խոշորները 12-ն են, իսկ մնացածները հանդիսանում են փոքր և միջին արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն «Արարատցեմենտ», «Վեդի-Ալկո», «Մասիս-Տոբակո», «Մասիս –տոբակ ինտերնեյշն», «Արտաշատի վինկոն», Ավշարի գինու կոնյակի. Պռոշյանի կոնյակի գործարանի մասնաճյուղը, Արտաշատի պահածոների, կղմինդրի, Արարատի, Մասիսի պահածոների գործարանները, ոսկու կորզման ֆաբրիկան, Սուրենավանի հայ-ռուսական համատեղ բիտումի գործարանը, «Արարատ Գրուպ» զովացուցիչ ջրերի գործարանը:

Արարատի մարզում է արտադրվում ՀՀ արտադրվող գինու, կոնյակի, օղու արտադրանքի գերակշիռ մասը: Մարզի գինու-կոնյակի, պահածոների գործարանների թողարկած արտադրանքը իր բարձր որակի շնորհիվ մեծ ճանաչում է ձեռք բերել միջազգային ասպարեզում: Մարզում զարգանում է նաև փոքր և միջին

ձեռնարկատիրությունը, դրանք հիմնականում սննդի, շինանյութերի, անտառային, քիմիական, մշակութակենցաղային նշանակության և թեթև արդյունաբերության ապրանքների արտադրական ձեռնարկություններ են:

2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզի արտադրական ձեռնարկությունների, փոքր ձեռնարկատիրական սուբյեկտների կողմից թողարկվել է 125 մլրդ 350,6 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, նախորդ տարվա 109 մլրդ 775.4մլն դրամի դիմաց, աճը կազմել է 114.1%: 2015թ. Համեմատ մարզում ավելի է արտադրվել 15 մլրդ 575.2 մլն դրամի արտադրանք: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 8.7 - 12.2%-ը:

Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 102.4 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել է 101.2% կամ 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 101.1%:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները 2016թ հունվար- սեպտեմբեր ամիսներին կազմել է 140 մլրդ 597,4 մլն դրամ՝ նախորդ տարվա 129 մլրդ 303,8 մլն դրամի փոխարեն, աճը կազմել է 108.7 %:

Մարզի բնակչության համար կարևոր նշանակություն ունի մշակող արդյունաբերությունը՝ մասնավորապես սպառողական ապրանքների արտադրությունը: 2016 թ. 9 ամիսների ընթացքում սպառողական ապրանքների արտադրության ծավալը կազմել է 30 մլրդ 199.6 մլն դրամ, նախորդ տարվա 28 մլրդ 100.9 մլն դրամի դիմաց, աճը կազմել է 107.4 %: Նախորդ տարվա համեմատ սննդամթերքի արտադրության աճը կազմել է 103.3 %, հագուստի արտադրության աճը կազմել է 42.6%, հիմնային մետաղների արտադրությանը՝ 127.7 %:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից արտադրված 38 անվանական հիմնական արտադրատեսակներից մի շարք արտադրատեսակների գծով՝ մշակող արդյունաբերության՝ սննդամթերքի արտադրության, թղթի, քիմիական, դեղագործական նյութերի, ռետինե, պլաստմասե իրերի արտադրություն ձեռք է բերվել և աճել է նախորդ

տարվա նույն ժամանակաշրջանի արտադրական մակարդակը: Ավելացել է սննդամթերքի՝ մսամթերքի, հացի, ալյուրի, պանրի, ոչ ալկոհոլային խմիչքների, մակարոնեղենի, հրուշակեղենի, անձեռոցիկների, գորգերի, ստվարաթղթի արտադրությունը: Պակասել է այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, խմիչքների, կահույքի արտադրությունները:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 155 հազ. 840 դրամ՝ նախորդ տարվա 144 հազ. 587 դրամի դիմաց, աճը կազմել է 107.7%:

2015թ. ընթացքում Արտաշատ, Մասիս, Արարատ քաղաքներում, և գյուղական համայնքներում ստեղծվել են թվով 5 փոքր ձեռնարկություններ և 167 առևտրային կազմակերպություններ:

2015 թվականի ապրիլից Արտաշատ քաղաքում իր ամբողջ հզորությամբ աշխատում է «ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ» ընկերության կողմից կառուցված զովացուցիչ ջրերի գործարանը: 2017թ. գործարանում կշարունակվի իրականացվել նորարական ներդրումներ:

Մարզի Մասիսի տարածաշրջանում «Ոսկե կացին» ՍՊԸ-ի կողմից՝ հայ-իրանական գործարարների 5 մլն ԱՄՆ դոլար ներդրումով, կառուցվել է ժամանակակից սարքավորումներով և նորագույն տեխնոլոգիաներով հզոր արտադրողականությամբ / 1000 մանր եղջերավոր անասունների/ սպանդանոց: 360 խոշոր եղջերավոր անասուների սպանդանոցի կառուցման աշխատանքները կսկսի 2017թ հունվարից, նոր արտադրամասի շահագործումից կստեղծվեն 100-ից ավել նոր աշխատատեղեր:

«Գրին Հաուս» ՍՊԸ-ն մարզի Շահումյան համայնքում 25 մլն ԱՄՆ դոլար ներդրումով հիմնում է 30.0 հա ընդհանուր տարածքով ջերմոցային տնտեսություններ: 2015թ. ապրիլից ջերմոցային տնտեսությունը տվել է իր առաջին արտադրանքը, ստեղծվել է 50 աշխատատեղ: 2017թ. կշարունակվի աշխատանքները, արդյունքում կավելանա ևս 25 նոր աշխատատեղ:

Մարզի տնտեսության զարգացման վրա էական նշանակություն են ունեցել խոշոր մասնավոր ներդրումները մարզի մի շարք ձեռնարկություններում՝ «Մանանա Գրեյն» ՍՊԸ-ի

քարի վերամշակման և գյուղ մթերքի վերամշակման գործարաններում՝ ընդլայնվել է Այգեստանի գինու կոնյակի գործարանի, Քաղցրաշենի և Ավշարի կոնյակի գործարանի արտադրական կարողությունները:

2016թ. մարզում գործող ձեռնարկությունների կարողությունների ընդլայնման, նոր ձեռնարկությունների ստեղծման արդյունքում ստեղծվել են շուրջ 450 նոր աշխատատեղեր:

Մարզում 2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմել է 30 մլրդ 199.6 մլն դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 28 մլրդ 100 մլն դրամի փոխարեն: Այն իրականացվել է 1482 առևտրային կազմակերպությունների միջոցով, նախորդ տարվա 1357-ի համեմատ: Մարզի մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի 58.6 %-ը ձևավորվել է խանութների, 2.0 %-ը՝ կրպակների, 39.4 %-ը՝ հանրային սննդի և այլ օբյեկտների. 1.2 %-ը՝ գյուղարտադրանքի և 2.8%-ը՝ սպառողական ապրանքների շուկաների միջոցով:

Մարզում սպառողական շուկան բնութագրվում է կայուն աճի վիճակով: Անցած տարվա նկատմամբ մանրածախ առևտրի կազմակերպությունների ապրանքաշրջանառության ծավալը ընթացիկ գներով աճել է: Մարզում 2016 թ. 9 ամիսների ընթացքում սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալը փաստացի գներով կազմել է 505 մլն դրամ:

15. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2016թ. շարունակվել է առևտրա-տնտեսական և մշակութային համագործակցությունները Բելառուսի Հանրապետության Բրեստի մարզի և ՌԴ մի շարք մարզերի հետ:

Մարզպետարանը տարվա ընթացքում իրականացրել է միջոցառումներ ուղղված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզերի միջև համագործակցության մասին կնքված Փոխըմբռնման Հուշագրի

շրջանակներում մշակութային և գործարար համագործակցության վերաբերյալ ծրագրերի իրականացմանը, մասնավորապես՝ ապահովվել է մարզի գործարար շրջանների մասնակցությունը Երևան քաղաքում նոյեմբերին Ռուսաստան – Հայաստան միջտարածաշրջանային համագործակցության շրջանակներում անցկացվող ամենամյա «Երևան Էքսպո» ինովացիոն ցուցահանդեսին, որի շրջանակներում կայացել են հանդիպումներ ՌԴ մարզերի և Արարատի մարզի գործարարների միջև: Քննարկվել են գործարար համագործակցության խնդիրների վերաբերյալ հարցեր: Արդյունքում ձեռք է բերվել մի քանի նախնական պայմանավորվածություններ մարզում արտադրվող որոշ արտադրատեսակների հնարավոր արտահանումների վերաբերյալ:

2016 թվականի ընթացքում մարզպետարանում կազմակերպվել է հանդիպումներ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության դեսպանատների ներկայացուցիչների հետ:

Արարատի մարզպետարանը իր ակտիվ մասնակցությունն է ունենում ամենամյա անցկացվող Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովներում:

2016թ. հոկտեմբերի 14-ին կայացված Հայ-ռուսական միջտարածաշրջանային 5-րդ համաժողովի շրջանակներում Արարատի մարզպետարանը ընդունել է հոկտեմբերի 15-ին ՌԴ Ռոստովի մարզի պաշտոնական պատվիրակությանը:Այդ համաժողովի շրջանակներում հոկտեմբերի 13-ին Արարատի մարզպետարանը մասնակցել է Հայ-ռուսական երիտասարդական 2-րդ համաժողովի պլենար նիստին:

ՀՀ Արարատի մարզի հրավերքով 2016թ. մարտի 14-ից 17-ը ԻԻՀ Գիլանի նահանգապետ Ալի Նաջաֆիի գլխավորած պատվիրակությունը այցելել է Հայաստան: Մարտի 15-ին Գիլանի նահանգի պաշտոնական պատվիրակությունը այցելել է Արարատի մարզ: Մարզպետարանում կայացել է հանդիպում և քննարկումներ:

Ի պատասխան Գիլանի նահանգապետ Մոհամմադ Ալիի Նաջաֆիի Արարատի մարզպետին ուղղված՝ Գիլանի նահանգ այցելելու հրավերը: Մարզպետարանի պատասխան գրությամբ Արարատի մարզպետի կողմից ընդունվել է հրավերը: Նախապատրաստական աշխատանքները ընթացքի մեջ են:

2016թ. Դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրվել է փոխըմբռման հուշագիր ՀՀ Արարատի մարզի և ԻԻՀ Գիլանի նահանգի միջև եղբայրացման և սոցիալ-տնտեսական համագործակցության մասին:

Մարզպետարանը՝ 2016թ. ընթացքում ևս, իր աջակցությունն և անմիջական մասնակցությունն է ունեցել մարզի համայնքների և միջազգային այլ պետությունների տարածքային միավորների հետ՝ մասնավորապես Փ. Վեդի համայնքի և Ֆրանսիայի Սեն Մարտեն Դեր քաղաքի, Արտաշատի և Ֆրանսիայի Քլամարի քաղաքների եղբայրացման և համագործակցության վերաբերյալ համաձայնությունների ձեռք բերման և իրականացման գործընթացներին:

Դեռևս 2013թ. հոկտեմբերի 15-ից 18-ը Արտաշատի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցել է Ֆրանսիայի Հանրապետության Վալանս քաղաքում անցկացվող Ֆրանկաֆոնիայի երկրների համաժողովի աշխատանքներին: Արտաշատի քաղաքապետը այցելել է նաև Քլամար քաղաք և ստորագրվել է Հայտարարություն՝ համաձայն որի, երկու քաղաքները ի նշան բարեկամության վերահաստատում են իրենց եղբայրացման երդումը: Ի նշան մեր բարեկամության Քլամար քաղաքում բացվել է Արտաշատի անունը կրող հրապարակ, որտեղ տեղադրված է «Արտաշատի արծիվ» հուշարձանը, իսկ 2016թ-ի սեպտեմբերի 19-ին Քլամար քաղաքի նույն հրապարակում բացվեց Արտաշատի անունը կրող շատրվանը: Այդ միջոցառմանը ներկա էր նաև Արտաշատի համայնքապետ Արգամ Աբրահամյանը՝ քաղաքապետարանի պատվիրակության ուղեկցությամբ: Նույն օրը համերգային ծրագրով հանդես եկան նաև Արտաշատի համայնքային Արտադպրոցական կենտրոնի սաները թվով 10 երեխա՝ ներկայացնելով հայկական մշակույթը:

Դեռևս 2012թ. Ֆրանսիայի Հանրապետության Սեն Մարտեն Դեր քաղաքի քաղաքապետը ներկայացրել է նախաձեռնություն՝ Փ. Վեդի համայնքում էկո տուրիզմը զարգացնելու նպատակով համայնքում ներդրումների իրականացնելու վերաբերյալ: 2016թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները Փոքր վեդու գյուղապետարանի և

Ֆրանսիայի Հանրապետության Սեն Մարտեն Դեր քաղաքի քաղաքապետարանի միջև Փոքր Վեդու համայնքում ստեղծելու հնարավորություններ էկոտուրիզմը զարգացնելու համար:

Մարզպետարանը աջակցություն ցուցաբերել և անմիջական մասնակցություն է ունեցել ՀՀ միջազգային պայմանագրերով, միջազգային կառույցների կողմից մարզում իրականացվող տնտեսական ծրագրերին, մասնավորապես ՀՏՋՀ, ՀԲ, USAID, Ասիական զարգացման բանկ,ֆրանսիական զարգացման բանկ միջազգային վարկային և հասարակական կազմակերպությունների կողմից մարզի տարածքում իրականացվող ծրագրերին:

2016 թվականի ընթացքում մարզում իրականացվել է ծրագրեր հետևյալ միջազգային կազմակերպությունների կողմից՝

- Ասիական զարգացման բանկի միջոցներով մարզի ոռոգման համակարգի կատարելագործման նպատակով՝ մեխանիկականից անցում ինքնահոս ոռոգման համակարգի Քաղցրաշենի ինքնահոս ջրատարի և հարակից համայնքների ջրատարների կառուցում՝ շուրջ 584 մլն դրամի:
- ֆրանսիական զարգացման բանկի միջոցներով մարզի ոռոգման համակարգի կատարելագործման նպատակով Վեդու ջրամբարի կառուցում՝ շուրջ 42 մլրդ. դրամի:
- ՀԲ –ի կողմից իրականացվում է Արտաշատի հիվանդանոցի վերակառուցման աշխատանքները՝ շուրջ 1 մլրդ 700 մլն դրամ արժողությամբ:
- Շվեցարական «Կանայք հանուն առողջության և առողջ ապրելակերպի» Հասարակական կազմակերպության միջոցներով 2014թ.-ից իրականացվում է Դիտակի դպրոցի վերանորոգման աշխատանքները 80 մլն դրամ ընդհանուր արժողությամբ, 2015 թ. ընթացքում իրականացվել է շուրջ 33 մլն դրամի ներդրում:
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվում է Դաշտաքար գյուղի մանկապարտեզի կառուցում՝ 177 մլն դրամի, Աբովյան գյուղի մանկապարտեզի ՝ 198 մլն դրամի, Արարատ գյուղի մանկապարտեզի կառուցում՝ 125 մլն դրամի ծրագրերի իրականացում:

- FAO միջազգային կազմակերպության կողմից 290.0 հազ ԱՄՆ դոլար է ներդրվել Դարակերտ գյուղում գործող բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնում սերմնաբուծության զարգացման համար: Ներկայումս ընթանում են հոսքագծերի տեղադրման աշխատանքները: Ներդրումները կավարտվեն 2016թ:

- Փրկեք երեխաներին կազմակերպության /ԱՄՆ՝ (USAID)/ կողմից իրականացվել է «LIFE» ծրագիրը (Կենսամակարդակի բարելավում, զբաղվածության խթանման միջոցով), - ծրագրի իրականացման համար ծախսվել է 3.5 մլն դրամ:

- «Առաքելություն Հայաստան» Հասարակական Կազմակերպության միջոցներով կազմակերպվել է Արարատի մարզում ծերերի սպասարկում - 12.9 մլն դրամի:

16. ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղարկված գրությունների պատասխանների հիման վրա 2016 թվականին թարմացվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց, երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաների, ինչպես նաև երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների, տվյալների շտեմարանը:

- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ՝ 114
- Երկկողմանի ծնողազուրկ՝ 44
- Միակողմանի ծնողազուրկ՝ 1251
- Հաշմանդամ երեխաներ 738

Հաշվառվել են երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող թվով 2523 ընտանիքներ, որտեղ ապրում են 7625 երեխաներ: Իրականացվել են նրանց սոցիալական պաշտպանությանն ու հասցեական օգնությանն ուղղված ծրագրեր:

35 երեխաների նկատմամբ սահմանվել են խնամակալություն և հոգաբարձություն:

2016 թվականին մարզում հայտնաբերվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 152 երեխա: Իրականացվել է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն, կատարվել է կարիքների գնահատում և երեխաները ուղղորդվել են հատուկ և ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններ, իսկ 37 երեխա վկայագրվել է կրկնակի անգամ:

Մարզում հաշվառվել է 33 իրավախախտ երեխա: Ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ տարվել է համագործակցված աշխատանք՝ ուղղված նրանց սոցիալական վերականգնմանը և զարգացմանը: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է իրավախախտ անչափահասներին հաշվառել որպես կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա և նրանց հետագա գործունեությունը վերցնել հսկողության տակ:

Կատարվել են կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքների կարիքների ուսումնասիրում և գնահատում, որի արդյունքում շուրջ 37 ընտանիքի հատկացվել է 556 կտոր հագուստ և հիգիենայի պարագաներ:

2 հաշմանդամի տրվել է անվասայլակ, 1 հաշմանդակի էլ՝ քայլակ:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություններից դուրս է գրվել և կենսաբանական ընտանիք վերադարձել 17 երեխա՝ մարզպետարանի համապատասխան բաժնի մասնագետների համատեղ իրականացրած երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրության և կարիքների գնահատման հիման վրա**:**

Մարզպետարանի միջնորդությամբ սոցիալապես անապահով ընտանիքների և գիշերօթիկ հաստատություններից դուրս գրված թվով 20 երեխաներ իրենց ամառային հանգիստն անցկացրել են Հանքավանի << Հեքիաթների կիրճ >> և << Խոտոր ջուր >> ամառային ճամբարներում:

Կատարելով երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն և կարիքի գնահատում մանկուց հաշմանդամ առանց ծնողական խնամքի մնացած 3 երեխա տեղավորվել է Գյումրու մասնագիտացված մանկատուն:

Նշված ժամանակահատվածում ստացվել է 5 դիմում՝ երեխայի որդեգրման հնարավորության վերաբերյալ եզրակացություն ստանալու խնդրանքով: Մարզպետարանի համապատասխան բաժնի մասնագետները դիմողների կենսապայմաններն ուսումնասիրելու նպատակով կատարել են տունայց, կազմել համապատասխան ակտ և ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, տրվել է դրական եզրակացություն՝ որդեգրման հնարավորության մասին:

Կազմակերպել և իրականացրել են ՀՀ Արարատի մարզպետարանի գենդերային հարցերով մշտական հանձնաժողովի նիստերը: Տեղի է ունեցել գենդերային հարցերով մշտական հանձնաժողովի 4 նիստ:

17.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2016 թվականի ընթացքում պարբերաբար անցկացվել են հանրային լսումներ, քննարկումներ, բոլոր համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ ազգաբնակչության հետ: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ այդ հանդիպումների ընթացքում բարձրացված հիմնախնդիրներին լուծում տալու ուղղությամբ:

Մարզպետարանում գործող <<Թեժ գիծ>> հեռախոսակապով ստացված ահազանգերը օպերատիվ լուծում են ստացել:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է մարզխորհրդի 4 նիստ և 22 խորհրդակցություն:

Համայնքի ղեկավարի սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների, համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված ժամանակացույցով վարչական հսկողություն է իրականացվել մարզի 34 համայնքներում: Ուսումնասիրության

արդյունքում հայտնաբերված թերություններն ու բացթողումները քննարկվել են և հետևողական աշխատանք է տարվել դրանց վերացման ուղղությամբ, որի մասին, համաձայն սահմանված կարգի՝ յուրաքանչյուր եռամսյակ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքների աշխատակազմերում զբաղվածների թվաքանակը՝ 1181, որից համայնքային ծառայության պաշտոններ են զբաղեցնում 552-ը, որից 100-ը՝ գլխավոր, 124-ը՝ առաջատար, 328-ը՝ կրտսեր պաշտոններ:

Վերապատրաստվել են է թվով 69 համայնքային ծառայողներ և ստացել որակավորման համապատասխան տեղեկանքներ:

Համաձայն ժամանակացույցի՝ հայտարարվել է համայնքային ծառայողների թափուր պաշտոնները համալրելու 36 մրցույթ:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը: Սահմանված ժամկետներում հայտարարությունները տեղադրվել են ցուցատախտակների վրա, մարզպետարանի ինտերնետային կայքում և Azdarar.am կայքում:

Սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը, ձեռնարկվել են միջոցներ համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ:

Անցկացվել է համայնքային ծառայողների 5 ատեստավորում:

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 26-ի N 05-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի համաձայն, առանձնակի ուշադրության է արժանացել

մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների, այդ թվում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ գրանցամատյանները (Ձև1, Ձև2) սահմանված ժամկետներում և պատշաճ լրացված վիճակում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տրամադրելու գործընթացը:

Մարզի 90 համայնքում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը:

Ֆինանսական սուղ միջոցների պատճառով մարզի 5 համայնքներում /Լանջառ, Վարդաշատ, Գինեվետ, Ուրցալանջ, Դաշտաքար/ առայժմ գործընթացն ավարտված չէ:

90 համայնքներ ունեն համայնքային կայքեր /դոմեն հասցեներ/, Ռեալ IP – ներ և ապահովված են համապատասխան հզորության համակարգիչներով, ունեն վերապատրաստված մասնագետներ:

«Էլ-հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի շրջանակում իրականացված՝ մարզի գյուղերում անլար ինտերնետ սարքերի մատակարարման և տեղադրման ծրագրի թվով 16 շահառու գյուղական համայնքներում՝ Արաքսավան, Ազատաշեն, Արմաշ, Բերդիկ, Գինեվետ, Դեղձուտ, Դաշտաքար, Երասխ, Զանգակատուն, Լուսառատ, Հնաբերդ, Նոր ուղի, Նոր Կյուրին, Սիփանիկ, Վարդաշատ, Վարդաշեն, WiFi երթուղիչ սարքեր են տեղադրվել, որոնք գործարկվում են և կիրառվում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016 թվականին մարզի 69 համայնքներում համայնքի ղեկավարների ընտրություն է եղել, 82 համայնքում՝ ավագանու ընտրություններ:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մարզի համայնքների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների կողմից իրականացված գործառույթների կանոնակարգման նպատակով կատարվել են համակարգված աշխատանքներ:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համայնքների ղեկավարների պարտադիր լիազորությունների կատարման ուղղությամբ զինկոմիսարիատների, աշխատակազմերի քարտուղարների, ՔԿԱԳ տարածքային բաժինների պետերի և առանձին համայնքային ծառայողների հետ համագործակցված աշխատանքներ են տարվել:

Կիսամյակը մեկ կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն՝ վարչության, տարածքային զինկոմիսարիատների և աշխատակազմերի քարտուղարների հետ: Յուրաքանչյուր ամիս աշխատակազմերի քարտուղարներն այցելել են տարածքային զինկոմիսարիատներ՝ կցագրված ռեսուրսի ընթացիկ փոփոխություններ կատարելու զինակոչիկների հաշվառման գրանցամատյաններում, ինչպես նաև լրացուցիչ հրահանգներ ստանալու համար:

Մարզի բոլոր համայքներում կազմվել և հաստատվել են համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանները:

«Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի զ/ կետի պահանջների կատարման ուղղությամբ համայնքներում ստեղծվել են համապատասխան կազմավորումներ, արագ արձագանքման խմբեր, տարհանման հանձնաժողովներ:

«Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ստեղծման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. թիվ 384-Ն որոշման համաձայն ստեղծված են մարզային ՔՊ ծառայություններ՝ ինժեներական, կոմունալ տեխնիկական, բժշկական, էներգետիկայի և լուսաքողարկման, առևտրի և սննդի նյութատեխնիկական մատակարարման, կապի և ազդարարման, բույսերի և կենդանիների պաշտպանության, հասարակական կարգի պահպանության, տրանսպորտային, բնակչության հատուկ սպասարկումների, որոնց պատրաստականության ապահովման ուղղությամբ անցկացվել է շտաբային վարժանքներ, կազմվել են աշխատանքային պլաններ,

անցկացվել են պարապմունքներ: Առկա են մարզի ՔՊ ծառայությունների պլանները և ծառայությունների անհրաժեշտ փաստաթղթերը:

Մասնակցություն է ցուցաբերվել Արարատի մարզի համայնքների կողմից արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացված թվով 95 շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստման աշխատանքներին, ինչպես նաև՝ թվով 30 շտաբային ուսումնավարժություններին:

Մարզի 95 համայնքներում ստեղծվել են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովներ: Ճշգրտվել են համայնքների «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման» պլանները:

Համաձայն Արարատի մարզպետի կողմից հաստատված պլանի՝ մարզպետարանի և մարզի կազմակերպությունների ղեկավար աշխատողները մասնակցել են ՀՀ ՏԿԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում անցկացված վերապատրաստման դասընթացներին:

Ուսումնասիրվել են մարզի 95 համայնքների ազդարարման համակարգերը: Տարվա ընթացքում իրականացվել են աշխատանքներ՝ մարզում կառավարման, կապի և ազդարարման համակարգի բարելավման ուղղությամբ: Մարզի 40 համայնքներում բնակչության ազդարարումն իրականացվում է էլ. շչակների միջոցով, 57 համայնքներում՝ բարձրախոսների և այլ ազդարարման միջոցներով:

ՀՀ Ոստիկանության, Արտաշատ քաղաքում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասի և մարզի տարածքում տեղակայված ՊՆ թվով 3 զորամասերի հետ կազմվել են փոխհամագործակցության պլաններ, ինչպես նաև իրականացվել է համագործակցություն՝ մարզի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության Արարատի մարզային կենտրոնի և ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության Արարատի մարզային կենտրոնի ու շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզում գործում են 15 քաղաքական կուսակցությունների տարածքային և մարզային բաժանմունքներ, 50 հասարակական կազմակերպություններ, որոնցից 13-ը ակտիվ գործունեություն են ծավալում:

Այս աշխատանքները հնարավոր է եղել իրականացնել ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցության և իհարկե մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների ամենօրյա աշխատանքի արդյունքում: